Ազգ

AZG
armenian newspaper

Ա տարի, # 3, փետրուար 23. 1991

«ԱՄՆ-Ը ՃԱՆԱՉՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ».

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՑ ԼԱՄԲԵՐԹԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ.- Ամերիկայի Հայկական Համագումարի Վաշինգտոնի գրասենյակից 15 փետրվարի 1991-ին հրապարակված մի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Մ. Նահանգների դաշնակցային դատարանի դատավորներից Ռոյս Ս. Լամբերթը վերջերս թեեւ մերժել է հայկական ցեղասպանության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության մասին պետական քարոզչությանը պատկանող մի շարք փաստաթղթեր տրամադրելու մի դիմում, սակայն առաջին անգամ գրավոր կերպով բացահայտել է, թե «ԱՄՆ-ի քաղաքականությունը ճանաչում է հայերի նկատմամբ թուրքական ցեղասպանությունը»:

Փաստաթղթերի մերժումը հետեւել է Հայկական Համագումարի կառավարական եւ օրինական հարցերի գծով տնօրեն Վան Գրիգորյանի 1986 թ.-ին պետական քարտուղարության (State Department) դեմ հարուցած գործին, որով պահանջվում էր հրապարակել 1982 թ.-ին պետ. քարտուղարության բյուլետենում տպված եւ Հայկական ցեղասպանության իրողությունը կասկածի ենթարկող հայտնի Նշումին վերաբերող պետական բոլոր փաստաթղթերը:

Հիշյալ Նշումը, որ հետեւում էր վերոհիշյալ բյուլետենում հրապարակված «Հայկական ահաբեկչություն - Մի պրոֆիլ» վերնագրով հոդվածին, հայտնում էր, թե պետական քարտուղարությունը «չի որդեգրում կառավարության կողմից հայ ժողովրդի դեմ գործած ցեղասպանության մասին պնդումները» , եւ թե «հայ ահաբեկիչները այդ պնդումները օգտագործում են արդարացնելու համար թուրք դիվանագետների եւ հաստատությունների դեմ իրենց շարունակվող հարձակումները»:

Հայտարարելով, որ պահանջված փաստաթղթերը դասակարգված տեղեկությունների թվին են պատկանում եւ, հետեւաբար, արգելվում է դրանց հրապարակումը, դատավոր Լամբերթն այսուհանդերձ Վ. Գրիգորյանի հարուցած գործի իր եզրակացության մեջ հայտնում է նաեւ, որ *«պետական քարտուղարությունը 1983 թ.-ին չեղյալ է հայտարարել այդ Նշումը եւ վերահաստատել է ԱՄՆ-ի քաղաքականությունը, որ ճանաչում է հայերի նկատմամբ թուրքական ցեղասպանությունը»:*



ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ՄԵՐԺՈՒՄ ԵՆ ԳՈՐԲԱՉՈՎԻ ԾՐԱԳԻՐԸ

Բուշը Սադդամին պայմանաժամ է տալիս մինչեւ այսօր ժամը 21.00

Նախատեսվածից մեկ օր ուշ՝ հինգշաբթի առավոտյան Կրեմլում ընդունվելով պրեզիդենտ Գորբաչովի կողմից, Իրաքի արտգործ նախարար Թարեք Ազիզը նրան հանձնեց Սադդամ Հուսեյնի պատասխան նամակը, որը հայտնում էր, թե Իրաքն ընդունում է Մոսկվայի առաջարկած պայմանները՝ Քուվեյթից անհապաղ դուրս բերելու իր զորքերը, որի դիմաց, ինչպես առաջարկել էր Կրեմլը, դաշնակիցները նույնպես հեռացնում են իրենց ուժերը Պարսից ծոցի շրջանից եւ չեն միջամտում Իրաքի ներքին գործերին:

Նույն օրը, հիմք ընդունելով Սադդամի պատասխանը, Խորհրդային Միության արտգործ նախարար Բեսմերտնիխն ու Թարեք Ազիզը, խորհրդային բանագնաց Եւգենի Պրիմակովի ներկայությամբ ունեցան խորհրդակցություն, որից հետո մշակվեց 7 կետերից բաղկացած մի ծրագիր-առաջարկ, որը իսկույն կնքվեց «Գորբաչովի ծրագիր» անունով: Ըստ այդ ծրագրի, Պարսից ծոցում կրակը դադարեցվում է անմիջապես, որից 24 ժամ հետո Իրաքը հեռացնում է իր ուժերը Քուվեյթից, մինչ դաշնակիցները անում են նույնը: Այնուհետեւ շրջանում ՄԱԿ-ի հովանավորության տակ հաստատվում են խաղաղապահպան ուժեր՝ բաղկացած պատերազմին չմասնակցող երկրների զորքերից: «Գորբաչովի ծրագրով» նախատեսվում է նաեւ, որ դաշնակիցները դադարեցնեն օդաստոսից ի վեր Իրաքի դեմ գործադրվող շրջափակումը եւ նյութական հատուցումի ոչ մեկ պահանջ չդնեն այս երկրի առաջ:

Երեկ պրեզիդենտ Գորբաչովը հեռախոսով անձամբ ամերիկացի իր պաշտոնակցին ներկայացրեր այդ ծրագրի բովանդակությունը, որի շուրջը, այնուհետեւ, պրեզիդենտ Բուշը խորհրդակցություններ ունեցավ դաշնակից մյուս երկրների տերերի հետ:

Երեկոյան Սպիտակ տան բանբեր Մերլին Ֆիցվոթերը հայտնեց, թե Վաշինգտոնն անընդունելի է համարում «Գորբիի ծրագիրը»: Դաշնակից մյուս ուժերը, հանդես գալով իրենց արտգործ նախարարների կողմից, այդ ծրագիրը գնահատեցին ընդհանրապես «դրական քայլ՝ ճիշտ ուղղությամբ», մերժելով այն: Մյուս կողմից, Իրանը, Հորդանանն ու մի շարք այլ երկրներ ծափահարեցին այդ ծրագիրը, մինչդեռ Իսրայելը հայտնեց իր անվերապահ դժգոհությունը:

Ի վերջո, ուշ երեկոյան, պրեզիդենտ Բուշն անձամբ ելույթ ունենալով՝ ամբողջությամբ մերժեց «Գորբաչովի ծրագիրը», շնորհակալություն հայտնելով հանդերձ Կրեմլի պետին՝ «իր խաղաղարար ջանքերի համար»: Հայտարարելով, որ Իրաքը վերջին օրերին ամբողջովին քանդել է Քուվեյթի նավթարդյունաբերական ցանցը, նա հասկացրեց, որ Բաղդադը չի կարող խուսափել ռազմական հատուցումից: Վերջում վերջնագիր ներկայացրեց Իրաքին՝ մինչեւ այսօր, շաբաթ կեսօրին (Երեւանի ժամանակով երեկոյան 9-ը) իր ուժերը առանց պայմանի դուրս հանելու Քուվեյթից:

Ուշ գիշերին ռազմաճակատից հասնող լուրերը տագնապալից էին: Ծամաքային հարձակումը անմիջական է թվում:

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ՊԱՏԵՐԱԶՄ ՈՒ ՄԵՆՔ

Եթէ նոյնիսկ մեր վերաբերումը չի կարող որեւէ բան փոխել համաշխարհային իրադրութիւններում, յամենայնդէպս Պարսից ծոցում օգոստոսի 2-ին ՝բռնկած պատերազմը առաջին իսկ օրվանից պիտի որ գրաւէր մեր ամենասուր հետաքրքրութիւնը, շահագրգռուածութիւնը: Մինչդեռ, միայն օգոստոսի 8-ին էր, որ մեր հանրապետութեան օրաթերթերից մէկը առաջինը արձագանքեց դրան, եւ այնուհետեւ էլ մեր զանգուածային լրատուութեան միջոցներով տրուած տեղեկութիւններն եղան կցկտուր, դանդաղ, իսկ հատուկենտ մեկնաբանութիւնները՝ ընդհանրապէս մակերեսային, միակողմանի ու միամիտ:

Մեզ միշտ թւում է, որ ամբողջ աշխարհը պէտք է զբաղուի մեզանով, երբ մենք չենք հետաքրքրում նոյնիսկ անմիջականորէն մեզ վերաբերող, մեր կողքին մոլեգնող պատերազմով, որի կրակը լափում է ոչ միայն շրջանում գտնուող մեր հարազատներին, այլեւ՝ տաքութիւնը հասնում է մեզ, այսպէս կամ այնպէս:

Ազգովին դարձել ենք անտարբեր ու մեղկ, պարփակուած մեր պատեանի մէջ, մեր հոգսերի ու կենցաղային, ճիշտ է՝ ծանր, մտահոգութիւնների մէջ, չանդրադառնալով, որ համաշխարհային բոլոր վերիվայրումները իրենց անմիջական հետեւանքներն են թողնում նաեւ մեր վրայ:

Այս իմաստով Պարսից ծոցի պատերազմը մեզ համար ունի առանձնահատուկ՝ մի քանի նշանակութիւն:

"Առաջին՝ ՄԱԿ-ի որոշումով եւ դաշնակից զօրքերի կողմից է գործադրւում նախայարձակման ենթարկուած մի փոքրիկ եւ ինքնիշխան երկրից նախայարձակին դուրս վտարելու համար:

Սակայն հարց է առաջանում, թէ ՄԱԿ-ի բազմաթիւ որոշումները 1967թ. Թուրքիայի կողմից Կիպրոսի 40 տոկոսի զաւթման եւ կամ 1976թ. Լիբանանի տարբեր մասերի վրայ իսրայելեան ու սիրիական հեգեմոնիայի հաստատման կապակցութեամբ, ինչու" չարժանացան միջազգային նման վերաբերումի:

Քաղաքական ազդեցութեան գօտիներ ու տնտեսական շահեր: Ահա՛ ընդամենը այն՝ որը շարժում է մեր մոլորակի մեծ ուժերին, որոնց արանքում՝ մեր ժողովուրդը, այլ ժողովուրդներ:

Ինչ էլ պատահի՝ Իրաքը դուրս է գալու Քուվեյթից: Սակայն տագնապը պիտի շարունակուի: Իրաքի պարտութեամբ արաբ ժողովուրդը, յամենայնդէպս, իրեն պիտի զգայ պարտուած, մանաւանդ որ ԱՄՆ-ը եւ գուցե նաեւ արեւմտյան այլ երկրներ, պիտի պահպանեն իրենց ուժային ներկայութիւնը շրջանում: Հետեւաբար բոլոր դէպքերում շրջանում պիտի պահպանուի անկայունութիւնը, պիտի շարունակուեն յուսահատ ահաբեկչութիւնները Իսրայելի եւ արեւմտեան երկրների դէմ, պիտի առաջանայ իսլամական արմատականութեան նոր ալիք, պիտի սրուեն Հյուսիս-Հարաւ, կամ հարուստ եւ աղքատ երկրների միջեւ տարբերութիւններն ու հակադրութիւնները, եւ գուցէ, ինչպէս պընդում է այս օրերին արաբ մտաւորականութիւնը, պիտի սկսուի նոր գաղութատիրական ժամանակաշրջան:

Բազմաթիւ երկրներ այժմ արդէն խօսում են յետ-պատերազմեան շրջանի մասին: Այդ մասին խօսում է նաեւ Օզալի Թուրքիան, որ չի թաքցնում իր ախորժակները Մոսուլի եւ Կերկուքի նավթաշատ շրջանների հանդէպ, օգտագործելով նաեւ քրդական գործօնը: Շրջանում արեւմտեան ազդեցութեան ուժեղացումից իրեն անհանգիստ է զգում նաեւ Պարսկաստանը: Մինչ Խ. Միութիւնը ձգտում է բանակցութիւններ վարողի դերով իր ազդու վերադարձը ապահովել շրջանում:

Այս եւ այլ գործօններ ստիպում են մեզ ուշի-ուշով հետեւել բոլոր զարգացումներին եւ վերահաշուարկել մեր հնարաւորութիւնները ռազմագիտական, մտաւորական, տնտեսական եւ այլ ասպարեզներում:

Ապրում ենք աշխարհի ամենատաք շրջաններից մէկի հարեւանութեամբ: Պէտք է հանդէս բերել աւելի մեծ շահագրգռուածութիւն:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԴ

Խախտելով Հայաստանի Հանրապետութեան մամուլի մասին գործող օրէնքը, մեր թերթի 1-ին եւ 2-րդ համարների ճակատին գրել էինք, թէ «Ազգը» պաշտօնաթերթն է Ռամկավար ազատական կուսակցութեան, այն միամիտ յոյսով, որ դրանով խուսափած կը լինէինք աւելորդ ձեւամոլութիւնից: Սակայն, մամուլի պետական կոմիտէից մեզ յայտնում են, որ մեր այդ քայլը օրինազանցութիւն էր եւ պէտք է ուղղել, այլապէս կը փակուի մեր թերթը: Հետեւաբար, մինչեւ կուսակցութիւնների մասին օրէնքի հրապարակումը եւ ՌԱԿ-ի պաշտօնական գրանցումը, մեր թերթի ճակատից հանում ենք «Պաշտօնաթերթ Ռամկավար ազատական կուսակցութեան» վերտառութիւնը, ապաւինելով ընթերցողների ներողամտութեանը եւ խնդրելով նրանց, որ ց'նոր տնօրինութիւն այդ դատարկ թողնուած մասում կարդան այն՝ ինչ գրուել էր նախապէս:

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ

digitised by A.R.A.R.@

ԴՐՎԱԳՆԵՐ ՆԱՏԱՇՐՋԱՆԻՑ

«Կեղծիքը մտել է խորհրդարան», ասաց Բաքկեն Արարքցյանը, երբ պարզվեց, որ 11 պատգամավորների կոճակները սեղմել էին ուրիշները:

«Հայաստանի խորհրդարանին այսօր պետք չէ անկախ պետականության վերականգնման եւ ազգային հարցերի հանձնաժողով», այսպես Պարույր Հայրիկյանը բացատրեց իր խնդրանքը՝ ազատել իրեն այդ հանձնաժողովի անդամի պարտականություններից:

«Քարոզչություն արգելելու իրավունք մենք չունենք»,- ասաց Ռաֆայել Պապայանը «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ, պատասխանելով մի խումբ պատգամավորների հարցապնդմանը՝ անկախության դեմ քարոզչություն վարող կազմակերպությունները օրենքից դուրս հայտարարելու մասին:

«...Նրա հայտարարությունը պետք է հասկանալ այսպես, որ ԽՍՀՄ ճկարիչների միությունը այդպես է մտածում մեր նորացված, տպագա միության մասին, քանի որ բացառված չէ, որ այդ նախատեսված միությունը բաղկացած կլինի ճկարիչների միությունից, կամ այլ նման կազմակերպություններից...», ասաց Բաքկեն Արարքցյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հերթական նստաշրջանում պատգամավոր Հենրիկ Իգիթյանի ելույթի մասին:

«...Միեւնույն ժամանակ Հայաստանի հանրապետությունը ամենայն պատասխանատվությամբ հայտնում է... ձեր կյանքն ու կենսական շահերը բոլոր միջոցներով պաշտպանելու իր անփոփոխ վճռականությունը եւ ամեն ինչ կանի Արցախի վերամիավորումը Մայր Հայրենիքին ավարտին հասցնելու համար»:

ԱՌԵՏՈՒՐՆ ԱՆԵԿՈՒՅԱՆՈՎ Է

Փետրվարի 14-ին Երեւանում բացված «Հայաստան» ֆիրմային հանրախանութը աշխատանքային առաջին հինգ օրվա ընթացքում կատարեց մեկ ամսվա պլանը, անցնելով մեկ միլիոն 250 հազար ռուբլու սահմանը:

15 որպե պահանջվեց թղթակցից հանրախանութի տնօրեն պրն. Հայրապետյանի երրորդ հարկում գտնվող աշխատասենյակին հասնելու համար. աստիճանները լեփ-լեցուն էին գնորդներով:

Առաջին օրը գորգերի վաճառքի ժամանակ, խռնվածության պատճառով, նույնիսկ մի քանի ցուցափեղկ էր կոտրվել:

Բոլոր ապրանքները տեղական են, սակայն թեթեւ արդյունաբերության նախարարությունը բանակցություններ է վարում ֆրանսիական ընկերությունների հետ՝ ապրանքափոխանակման նպատակով: Ի դեպ, ֆրանսիացի գործարար մարդիկ բարձր են գնահատում Հայաստանում արտադրվող սպիտակեղենի եւ ներքնահագուստի որակը, ավելացրեց հանրախանութի տնօրենը:

ՄԱՐՏԻԿԻ ՕՐԱԳՐԻՑ

Ուզում եմ թղթին հանձնել խոհեր, որոնք մտահոգում են մեզ՝ հայ տղաներիս, որ արդեն 2-3 տարի է գտնվում ենք Արցախյան հերոսական հողում՝ պաշտպանելով այն թուրք ավազակախմբերի հարձակումներից ու թալանից, բարձր պահելով մեր նախնիների՝ ֆիդայիների սուրբ անունն ու զենքի պատիվը:

Բաքվի, Սումգայիթի ու Կիրովաբադի թուրք երիտասարդներից կազմավորված հրոսակախմբերի հարձակումները դառնում են հաճախակի այն օրերին, երբ մոսկովյան ատյաններում սպասվում է արցախյան խնդրի քննարկում: Հարձակվում են հանկարծ՝ նախապես տեղեկանալով, թե որ գյուղը պաշտպանված չէ: Անպաշտպան գյուղերը շատ են, իսկ պաշտպանները՝ սակավ: Սակայն մինչ այսօր թուրքերի բոլոր հարձակումները ետ են մղվում: Թուրքերը զինված են խորհրդային նոր զենքերով, հանդերձավորված են, առատորեն ֆինանսավորվում են: Ռուսական բանակը հաճախ նրանց կողմից է գործում: Եւ, այդուհանդերձ, մեր արի տղաները հերոսաբար դիմագրավում են այս ամենին ու պաշտպանում Արցախը:

Մենք արցախյան շարժմանը որդեգրվել ենք անկեղծորեն, շարունակելու համար մեր նախնիների սկսած պայքարը: Եվ պիտի պայքարենք մինչեւ Արցախի վերամիավորումը մայր հայրենիքին:

Սակայն հաճախ զգում ես, որ սոսկ սուրբ գաղափարներով պայքարելը հիանալի ֆինանսավորվող եւ զինված թուրք ավազակախմբերի դեմ դժվար է: Զինամթերքը հաճախ չի բավարարում: Սնունդն էլ այն չէ ու միշտ չէ, որ լինում է: Մի քանի ամիսը մեկ, երբ տուն ես վերադառնում, տեսնում ես, որ այն մոռացված է, լքված, կարծես ոչ ոքի պետք չէ: Ջեն էլ հետաքրքրվում: Մեր շարքերը դժվարությամբ են համալրվում: Եթե թուրք ավազակախմբերի մեջ շատ են Հայաստանից հեռացած թուրքերը, ապա մեր շարքերում չկան Բաքվից ու Սումգայիթից, Կիրովաբադից ու Ճամխորից գաղթած հայ տղաներ: Այս ամենից հետո Արցախ եկողները էլ ետ չվերադառնալու ցանկությամբ:

Եթե պայքարի ենք ելել, դրան պիտի լծվենք ազգովին՝ թե ժողովուրդը, թե նորաստեղծ կառավարությունը: Սոսկ սուրբ գաղափարներով առաջնորդվող սակավաթիվ տղաներով դժվար է իրագործել Արցախի վերամիավորումը...

«ՄԽՈ»

ԱՐՑԱԽ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐ

Ստեփանակերտի մսի կոմբինատը 1991 թվականի հունվարին անցյալ տարվա համեմատությամբ կիսով չափ պակաս միս է հանձնել:

Մսի կոմբինատի տնօրեն Նարիմանյանը դա բացատրում է հետեւյալ հանգամանքներով:

ա) Անասնակերը խիստ պակասել է:

բ) Բտման ենթակա անասունը շրջաններից բերելու համար բենզին չկա, ճանապարհներն էլ անտանելի վիճակում են:

1988 թվականի փետրվարյան ցույցերից հետո մարզն այլեւս ոչ մի տեղ միս չի արտահանում: 1988-89 թթ. ընդամենը 100 տոննա միս է ուղարկվել Երեւան: Առաքումը դադարել է ճանապարհները փակվելու պատճառով:

Ռուսաստանից ու այլ վայրերից երշիկի արտադրության համար լուացուցիչ հումք չի գալիս, որը բնականաբար խիստ բացասաբար է անդրադառնում երշիկի եւ մյուս արտադրամասերի գործունեության վրա:

Մսի կոմբինատի սարքավորումները 10 տարվա մաշվածք ունեն եւ դժվարացնում են աշխատանքների կազմակերպումը: Օրինակ՝ այսօր նույնիսկ մսագործական դանակների խիստ պակաս է զգացվում:

Նոր կոմբինատ կառուցելու անհրաժեշտություն կա: Կա անհրաժեշտ գումար, սակայն շինանյութ չկա:

1989 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ԱՐՑԱԽՈՒՄ ՋՈՀՎԵԼ ԵՆ...

շարունակություն թերթի նախորդ համարից

16. *Բեգլարյան Ա. Շարոյի* - Ծնվ. 1958 թ. Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղում: Սպանվել է 1990թ. հոկտեմբերի 25-ին, Մարտակերտի շրջանում՝ հրազենի վերքերից:

17. *Մատուրյան Եղիշե Մարգսի* - Ծնվ. Շուշիի շրջանի Եղծահող գյուղում: Սպանվել է 1990թ. նոյեմբերի 19-ին՝ գլխին ստացած հրազենի վերքերից:

18. *Համբարձումյան Եղիշե Տիգրանի* - Ծնվ. 1925 թ. Հադրութի շրջանի Թաղեր գյուղում: Սպանվել է 1990թ. դեկտեմբերի 17-ին:

19. *Գրիգորյան Ռոբերտ Գրիգորի* - Ծնվ. 1936թ. Ստեփանակերտում: Սպանվել է 1991թ. դեկտեմբերի 25-ին Միրբաշիրում (Մարտակերտին հարակից ադրբեջանական շրջան): Ազերիները փշրել են գանգը, անդամահատել: Մարզի դատական բժիշկն էր:

20. *Պողոսյան Սուրխայ Լազարի* - Ծնվ. 1937թ. Ստեփանակերտում: Սպանվել է Միրբաշիրում դատական բժիշկի հետ, նույն ձեւով: Դատական բժիշկի վարորդն էր:

21. *Գասպարյան Լյտնիկ Գրիգորի* - Ծնվ. 1965թ. Մարտունու շրջանի Կղարծի գյուղում: Սպանվել է 1991թ. հունվարի 11-ին Մարտունու շրջանում, գլխին ստացած հրազենի վերքից:

22. *Գասպարյան Անժելա* - Ծնվ. 1971թ.: Սպանվել է հղի վիճակում (Լյտնիկի կինն է), հրազենից ստանալով գլխուղեղի վնասվածք:

23. *Անտոնյան Սամվել* - Ծնվ. է Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում: Սպանվել է 1991թ. հունվարի 12-ին՝ հրազենի վերքերից:

24. *Եղյան Լեոնիդ Վազգենի* - Ծնվ. 1956թ. Ստեփանակերտում: Սպանվել է 1991թ. հունվարի 12-ին, հրազենի վերքերից:

25. *Մարտիրոսյան Սլավիկ Անդրեասի* - Ծնվ. է 1957թ., Ստեփանակերտում: Սպանվել է 1991թ. հունվարի 12-ին (Լեոնիդի հետ միասին) բազմաթիվ հրազենային վերքերից:

26. *Հովհաննեսյան Միքայել, Հարությունյան Հարություն Գեորգի* - Ծնվ. է 1961թ. Աբովյանի շրջանում, գրանցված էր Շուշիի Կիրովի սովխոզում: Վիրավորվելով մեջքից, սպանվել է 1991թ. հունվարի 18-ին (տեղեկությունը կիսատ է):

27. *Նասիբյան Արմեն* - Աշխաբադից վերադարձած փախստական: Սպանվել է Մարտունու շրջկենտրոնի, Դրուժբա փողոցի թիվ 22 տանը, 1991թ. հունվարի 28-ին: Ավտոմատի կրակահերթով սպանել են հատուկ նշանակության ադրբեջանական միլիցիայի ջոկատայինները: Ջավադ Ամրահովը նոնակ է շպրտել տան ներսը, որը չի պայթել: Արմենը ինքնապաշտպանական կրակ է բացել եւ Ջավադի ընկեր ջոկատայինները դրանից անմիջապես հետո սպանել են Արմենին, որը ունի կին եւ երեխա:

28. *Գրիգորյան Գրիշա* - 55 տարեկան: Ծնվ. է Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում: Սպանվել է 1991թ. փետրվարի 2-ին՝ այգու ճանապարհին, իր մեքենայում ադրբեջանցիների կրակոցներից վիրավորվելով: Մեքենայում գտնվող կինը եւ որդին անվնաս են մնացել:

29. *Կամո Առստամյան* - Ծնվ. 1968թ., Ստեփանակերտում: Սպանվել է 1991թ. փետրվարի 3-ին, Ասկերանի շրջանի Հովսեփավան գյուղում, հրազենից:

30. *Վարսեն Օհանյան* - Ծնվ. 1951թ., Ստեփանակերտում: Սպանվել է Կամոյի հետ, նույն ձեւով, 1991թ. փետրվարի 3-ին Հովսեփավանում:

31. *Առուշանյան Սերգեյ* - Ծնվ. 1953թ. Ասկերանի շրջանի Դահրավ գյուղում: Սպանվել է 1990 թ. փետրվարի 18-ին Ստեփանակերտ քաղաքում (նոնակ պատրաստելիս): Կրկժանի ինքնապաշտպանության պետն էր:

32. *Հարությունյան Սերյոժա Գենի* - Ծնվ. 1974թ., ծնողների հետ տեղափոխվել էր Հայաստանից Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղը: Սպանվել է ինքնաշեն զենքից, պատահաբար, 1991թ. ամռանը:

33. *Բարայան Ռոզա* - Ծնվ. Մարտակերտի Քոլատակ գյուղում, մահացել է սրտի կաթվածից 1990թ. հունվարի 2-ին, երբ փողոցում զորքը կրակել եւ սպանել է քանդակագործ Արմեն Հակոբյանին:

34. *Զորանյան Ն.*

35. *Զաքարյան Կ.*

36. *Խաչատրյան Ս.*

37. *Առաքելյան Կ. Ռ.*

Սպանվել են 1990թ. հոկտեմբերի 22-ին՝ Բերդաձորը պաշտպանելիս, գիշերային հսկողության ժամանակ:

38. *Ղահրամանյան* - Ծնվ. Ասկերանի շրջանի Խնաբադ գյուղում:

39. *Զաքմազյան Համբարձում* - Ծնվ. Հադրութի Մեծ Թաղեր գյուղում: Սպանվել է 1990թ.:

40. *Հովակիմյան Ռաֆիկ* - Հադրութի Ծամձոր գյուղի նախագահ, սպանվել է 1990թ.:

41. *Այթունյան Նիկոլայ* - Ծնվ. Հադրութի Մեծ Թաղեր գյուղում:

42. *Ալիխանյան* - Ծնվ. 1962թ.: Սպանվել է Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում:

1990թ. դեկտեմբերին սպանություններ են եղել Մարտակերտի եւ Հադրութի շրջաններում՝ 6 մարդ, որոնց անունները ընդգծված չեն այս ցուցակում: Ցուցակի տվյալները վերցվել են Ստեփանակերտի դատաբժշկական փորձակայանից: Նկարները եւս այնտեղից են վերցվել:

ՍԵՒԱՆ

ՆՈՐԱՇԵՆԻ ՄԻ ՕՐԸ

Գյուղամիջով ձգվող բոլոր ճանապարհները տանում են խանութի շենքը: Այստեղ են հավաքվում գյուղի մեծ ու փոքրը, քննարկում նորությունները, զրուցում:

- Մեր ունեցած-չունեցածը ես խանութի շենքն է, ոչ մշակույթի տուն ունենք, ոչ գրադարան, ոչ էլ կինոդահլիճ,- ասում է գյուղի տարեց բնակիչներից մեկը:

Իրականում Նորաշենում տիպային մշակույթի տուն կա: Սակայն հոկտեմբեր ամսից այն չի ջեռուցվում: Փակ են խաղասենյակի, գրադարանի, կինոդահլիճի դռները, որովհետեւ չկա քարածուխ: Ի դեպ, Նորաշենը Սեւանի շրջանի միակ գյուղն է, որ գազաֆիկացված չէ: Թեեւ գազատար անցկացվել է, սակայն համապատասխան թույլտվություն չկա մարդկանց պահանջը բավարարելու համար, չնայած որ գյուղում ապրում է 94 ընտանիք կամ 383 շունչ:

Նորաշենցուն այսօր էլի շատ հարցեր են հուզում: Դրանցից մեկը էլ մանկապարտեզի խնդիրն է: Գյուղից այժմ 12 երեխա ստիպված Զկալովկայի մանկապարտեզն են հաճախում: Թե ե՞րբ սեփականը կունենան, պարզ չէ: Նորաշենի այս «չկա»ների ցուցակը կարելի է անվերջ շարունակել, բայց գյուղացին մի կերպ ապրում է: «Հո բոլորս Ամերիկա չենք գնալու», ասում է գյուղի ծերերից մեկը:

ՎԻԳԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Սեւանի ավազանի մեր սեփ. թղթ.

ԿԻՐՈՎԱԿԱՆ

ԻՆՔՆՕՐԻՆԱԿ ՀԱՐՄԱՐԱՆՔ

«Շտանգ-հանտել», այսպես է կոչվում այն հարմարանքը, որի գեղարվեստակոնստրուկտորական մշակումը կատարել է Կիրովականի հաստոցաշինական միավորման ինժեներ կոնստրուկտոր Էդուարդ Աղամյանը. նա հեղինակային վկայական է ստացել գյուտարարության եւ հայտնագործությունների ԽՍՀՄ պետական կոմիտեի կողմից: Հարմարանքի ինքնօրինակությունն ու անառվորությունը կայանում է նրանում, որ տնային պայմաններում հնարավոր է հանտելները ձեւափոխել ծանրաձողի: Մետաղի դեֆիցիտի հետ կապված դժվարությունները հաղթահարելուց հետո կկրվի այդ իրի զանգվածային թողարկումը:

ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ ԲԱԶՄԱԹԻՎ ՀԱՐՅԱԿԱՆՆԵՐՈՎ

Բուռն բանավեճ է ծավալվել քաղաքային «Վերածնունդ» թերթում տպագրված «Մշակույթի պալատը սպասում է տիրոջը» հոդվածի շուրջը: Թերթի տարբեր համարներում տպագրվել են երկու տասնյակից ավելի արձագանքներ եւ քիմիական գործարանի տնօրեն Ա. Առաքելյանի պաշտոնական պատասխանը: Բանը նրանումն է, որ քիմիագործների մշակույթի պալատը ճարտարապետական մեծ արժեք է ներկայացնում, իսկ գործարանի ղեկավարությունը՝ չունենալով անհրաժեշտ գումար (մի քանի միլիոն ռուբլի), արհեստականորեն ձգձգում է վթարված շենքի վերականգնման գործը, վտանգելով այդ եզակի կառույցի հետագա ճակատագիրը: Առայժմ այն քաղաքային խորհրդի տնօրինությանը հանձնելու առաջարկությունը կըտրականապես մերժվում է գործարանի ղեկավարության կողմից:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

▬ Աղետի գոտու վերականգնման մասին կառավարության որոշման համաձայն 1989-90 թվականներին Կիրովականում պլանավորվել էր շահագործման հանձնել 330 միլիոն ռուբլի ընդհանուր գումարով 810 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն:

Ընդհանուր առմամբ 1989 թվականից մինչեւ 1991 թվականի հունվարի 1-ը քաղաքում կառուցվել է 1929 բնակարանով 145 շենք, որոնց մակերեսը 139,46 հազար քառակուսի մետր է:

1989 թվականին նախատեսված 311,2 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերեսով 366 շենքի փոխարեն շինկազմակերպությունները կառուցել են 19,46 հազար քառակուսի մետր մակերեսով՝ 19 շենք:

1990 թվականին պետական պլանը եղել է 790,5 հազար քառակուսի մետր մակերեսով 832 շենք: Շինարարներն ընդունել են մեկ այլ, ավելի ցածր պլան՝ 381,8 հազար քառակուսի մետր մակերեսով 379 շենք: Շահագործման է հանձնվել 120,02 հազար մետր մակերեսով 126 շենք...

«Վերածնունդ» թերթ

digitised by A.R.A.R.@

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ

Նկատի ունենալով, որ մեր ընթերցողների ստվար մեծամասնությունը չունի առիթը սփյուռքահայ մամուլն ընթերցելու, այս էջով պարբերաբար հրատարակելու ենք լայն քաղվածքներ տարբեր գաղութներում լույս տեսնող այդ թերթերից:

«ՍՓԻՒՌՔ»

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ «ՃԻՃԵՌՆԱԿՆԵՐ»

Լիբանանում լույս տեսնող Հայ Ժողովրդական Շարժում կազմակերպության «Սփիւռք» պաշտոնաթերթի 1990 դեկտեմբերի համարում կարդում ենք հետեւյալը՝ «Ոռոշի երեւույթներ» ենթավերնագրի տակ:

Միշտ կողմ եղած ենք Հայրենիք-Սփիւռք կապերու սերտացման, փոխադարձ այցելութիւններու յաճախացման:

Գոհունակութեամբ ընդունեցինք հայրենի իշխանութեանց հրաւէրը սփիւռքեան կուսակցութիւններուն՝ վերադառնալու Հայրենիք: Դժբախտաբար, այսօր կը տեսնենք որ այդ վերադարձը աւելի շատ կը հետապնդէ իշխանութեան տիրանալու կամ զայն բաժնելու ձգտում, քան հայրենաշինական ազնիւ նպատակներ:

Շատ աւելի այպանելի երեւոյթ մը ստեղծուած է Սփիւռքի գաղութներուն մէջ, մասնաւորաբար հալեպահայութեան մօտ: Կարելի է ըսել՝ Հալէպ «ողողուած» է հայաստանցի «զբօսաշրջիկներով»: Անոնք կուգան հազարներով՝ օդային գիծով կամ ցամաքի ճամբով՝ Կումայրի-Կարս-Հալէպ երթուղիով:

Երբ Երեւան-Հալէպ թռիչքի յաճախականութիւնը երկու շաբաթէն փոխուեցաւ մէկ շաբաթուան, ըսինք՝ լա՛ւ: Երբ տեսանք «Հայեր շօ» վարիէթի խումբի գրեթէ մերկ աղջիկներով անճաշակ ելոյթը սուրիական հեռատեսիլէն, ըսինք՝ բա՛ւ: Իսկ երբ բանը հասաւ պոռնկութեան...

Երբ շահի մոլուցքը ոմանց կը մղէ Հայրենիքէն մաքսանենգելու եւ արտահանելու օտար դրամ, ոսկի, մշակութային եզակի հարստութիւններ (գորգ, սրբանկար, եւն.), չենք կրնար լռել (արդար ըլլալու համար ըսենք, որ այս ստոր գործին առաջատարները սփիւռքահայ փերեզակներն են): Իսկ երբ անպատկառութիւնը կը հասնի այն աստիճանին, որ շուկայ կը հանուին հայուհիներու մերկութիւնները՝ հոս արդէն լռելն իսկ անհնար կը դառնայ:

Արաբական երկիրներու հայ հաւաքականութիւնները տեղացիներուն մօտ համբաւ շահած են իրենց բարոյական պարկեշտութեամբ: Իսկ ահա, Հայրենիքէն «կը ներածուին» պոռնիկներ ու կաւատներ, որոնք իրենց անամօթութեամբ կը խորտակեն եօթ տասնամեակներու համբաւը: Հալեպաբնակ ընտանիքներ, միայնակ կիներ կամ այրեր, վարձու կուտան իրենց սենեակները այս «զբօսաշրջիկներուն»: Սակայն, կան այնպիսիներ, որոնք տեղացիներուն եւ ներածուած «մարդուշքա»ներուն միջեւ միջնորդ կաւատի առեւտուրով հսկայական գումարներ կը շինեն. «օքազիոն»ի գինը կրնայ իջնել 100 ս.ո.ի: Այս ստորին արարածներէն է «Մամա Մարինա» կոչեցեալը, ներկայիս Հալէպ հաստատուած հայաստանաբնակ «հովանաւոր» (patron) մը, որ պոռնկուհիներ բերել կու տայ Հայրենիքէն, կը վաճառէ անոնց բերած ապրանքները, փոխարէնը զանոնք օժտելով Հայրենիքին մէջ պահանջարկ ունեցող ապրանքներով, այս բոլորին վրայ՝ յաճախորդներ կը կարգադրէ իր հովանաւորեալներուն՝ խղճոտ մաս մը շահաբաժին հանելով:

Ցանցանքը միմիայն այս կաւատներունը չէ, այլ մեղքի իր բաժինն ունի այսպիսիները պատսպարող հալեպահայը, որ իր անտարբերութեամբ մեղսակից կ՚ըլլայ ոճիրին: Այո՛, ոճիր կ՚ըսենք, որովհետեւ այս պարագային հայուն բարոյակա՛նն է որ կը սպանուի:

Հայրենի իշխանութիւններէն կը պահանջենք միջոցներ ձեռք առնել նուազագոյնի հասցնելու (եթէ ոչ դադրացնելու) այս համազգային ամօթաբեր երեւոյթը:

Ինչպէս կ՚ըսեն՝ մարդ կայ խօսքով կը հասկնայ, մարդ ալ կայ՝ ծեծով:

Ընտրանքը խնդրոյ առարկայ անձերուն կը ձգենք:

«ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹ»

Լիբանանի համայնավար կուսակցության հայերեն պաշտոնաթերթ «Ազգային մշակույթի» 15 դեկտ. 1990-ի համարում լույս է տեսել հետեւյալը.

ԼԻԲԱՆԱՆԷՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՋԷՆՔԷՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՁԱԽՈՂԱԾ ՓՈՐՁ

ՈՐՈՇՈՂՈՒԹԵԱՆ ԵՏԻՆ

Լիբանանեան թերթերը իրենց երեքշաբթի օրուայ մէջ հրատարակեցին հետեւեալ լուրը.-

«Ապահովութեան աղբիւրները յայտնեցին, թէ լիբանանեան մաքսատան պատասխանատուները ձախողեցուցին դէպի Խորհրդային Հայաստանի Հանրապետութիւն զէնքեր ուղարկելու փորձ մը:

Աղբիւրները յայտնեցին, թէ երեւան հանուած են գնդաձիգներ, պայթուցիկներ եւ մեծ քանակութեամբ ռազմամթերք, զետեղուած Թրիփոլիի նաւահանգիստէն դէպի Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք՝ Երեւան ղրկուելիք ինքնաշարժերու մէջ:

Նոյն աղբիւրները կ՚աւելցնեն, թէ զէնքերը պահուած էին Լիբանանի մէջ գործածուած եւ նորոգութեան ենթարկուած ինքնաշարժերու ներքին մասերուն մէջ:

Աղբիւրները կ՚ըսեն նաեւ, թէ լիբանանեան իշխանութիւնները այս բոլորի մասին տեղեկացուցած են Պէյրութի խորհրդային դեսպանատունը եւ թէ այս ուղղութեամբ քննութիւնները կը շարունակուին»:

Այս է հրատարակուած լուրը:

Այժմ հայ ընթերցողը եւ ընդհանրապէս բոլոր հայերը հարց պիտի տան, թէ որո՞նք են արդեօք այդ անձինք, կամ այն կազմակերպութիւնը, որ նման մտահոգիչ գործունեութեան մը ետին կը գտնուին:

Անշուշտ թէ անոնք չեն գտնուիր հայ ժողովուրդի եւ Հայաստանի մէջ անդորրութեան ու խաղաղութեան պահպանման նախանձախնդիր անհատներու կամ կազմակերպութիւններու շարքերուն մէջ:

Կասկած չկայ թէ այդ զէնքերը կ՚ուղարկուին արկածախնդիր ու գործակալ տարրերու, որոնք գործի կը լծուին ու կը ֆինանսաւորուին հայ ժողովուրդի թշնամիներուն կողմէ, որոնք կը նպատակադրեն երկրորդ Լիբանանի մը վերածել Հայաստանը եւ զայն շահագործել իրենց մութ ծրագիրներուն համար:

Լիբանանահայ ազգային մարմիններուն եւ երեսփոխաններուն վրայ պարտականութիւն կ՚իյնայ հետապնդել եւ երեւան հանել այս արկածախնդրութեան ետեւը գտնուող կազմակերպութիւնը, իսկ Հայաստանի իշխանութիւններուն հետապնդել այն անհատները, որոնց անուան կը ղրկուին այդ ինքնաշարժերը, գիտնալու համար թէ որոնց պիտի յանձնուին այդ զէնքերն ու զինամթերքը:

«ՄԱՐՄԱՐԱ»

ԼՈՆՏՈՆԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԸ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՃԻՒՆԵՐՈՒ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ

Պոլսում լույս տեսնող «Մարմարա» օրաթերթի 1991-ի հունվարի 28-ի համարում հանդիպում ենք հետեւյալ լուսաբանությանը.

Անցեալ նոյեմբերին գրած էինք որ կարելի չէր եղած Զօրավար Անդրանիկ Օգանեանի աճիւնները Փարիզէն Երեւան փոխադրել. Անդրանիկին ազգականներուն կողմէ վերջին վայրկեանին յարուցուած կարգ մը արգելքներու պատճառաւ: Հակառակ որ Հայաստանէն յատուկ պատուիրակութիւն մը Փարիզ ժամանած էր աճիւնները Երեւան փոխադրելու համար, վերջին վայրկեանին դատական որոշում մը արգիլած էր աճիւններուն Փէր Լաշէզ գերեզմանատունէն փոխադրութիւնը:

Այժմ յայտնի կը դառնայ որ աճիւններու փոխադրութեան դէմ եկած են ոչ թէ Անդրանիկին ազգականները, այլ Լոնտոնի մէջ հիմնուած եւ ինքզինք «Անդրանիկի Աճիւնները Հայաստան Տեղափոխելու Մարմին» անուանող կազմակերպութեան մը կողմէ: Այս կազմակերպութիւնը դէմ եկած է աճիւնները սաւառնակով Փարիզէն ուղղակի Երեւան փոխադրելու որոշումին: Նիւ Եորքի «Արմինիոն Ռիփորթըր» թերթին մէջ նոյեմբերի վերջերը հրատարակուած յօդուածէ մը եւ յետոյ վերահիշեալ կազմակերպութեան կողմէ մամուլին ղրկուած հաղորդագրութենէ մը յայտնի կը դառնայ որ, կազմակերպութիւնը կը գլխաւորէ Լոնտոնաբնակ Պր. Սարգիս Սարգիսեան, որ հիմնէն ի վեր ծրագիր մը մշակած էր այս ուղղութեամբ: Պր. Սարգիսեան եւ համախոհները կը մտածէին, որ Անդրանիկի համար անարգական է անոր աճիւններուն սաւառնակով ուղղակի փոխադրութիւնը, եւ թէ աճիւնները նախ Լիոնի ճամբով պէտք է տարուին Մարսէյլ, հոնկէ Աթէնք, հոնկէ ալ Պուլկարիոյ Վարնա քաղաքը: Ամենուրեք հանդիսութիւններ պէտք է կատարուին, մանաւանդ Պուլկարիոյ մէջ, ուրկէ վերջ աճիւնները Սեւ ծովու ճամբով պիտի տարուին Խորհրդային Միութեան մէկ նաւահանգիստը, հաւանաբար Վրաստան, ուրկէ ալ պիտի փոխադրուին Երեւան: Կազմակերպութեան անդամները կը փափաքին նաեւ որ աճիւնները զետեղուին ոչ թէ Երեւանի Պանթէոնին մէջ, ինչպէս ծրագրուած էր, այլ Երեւանի նախկին Լենինի հրապարակին վրայ, Լենինի արձանին տեղ զետեղուելիք Անդրանիկի արձանին տակ:

Այս կազմակերպութեան միջամտութեամբ է որ դատական որոշում մը առնուեցաւ եւ անկարելի եղաւ աճիւններու փոխադրութիւնը, քանի որ Անդրանիկի ամերիկաբնակ ազգականները յայտնեցին թէ իրենք լուր չունէին այս զարգացումներէն:

Լոնտոնեան կազմակերպութիւնը, որ կը պնդէ թէ ճիւղեր ունի Երեւանի, Փարիզի, Զուիցերիոյ եւ Նիւ Եորքի մէջ, խստիւ կը պախարակէ Փարիզի Աղքատախնամ մարմինը եւ Փարիզի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գիւտ արք. Նագգաշեանը, որովհետեւ անոնք կողմնակից եղած էին որ աճիւնները ուղղակի Երեւան փոխադրուին սաւառնակով:

ԽՕՍՔ ՈՂՋՈՅՆԻ

«ԱԶԳ» ԵՌՕՐԵԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ռամկավարական սկզբունքներու կիրարկման գծով, իրերայաջորդ հանգրուաններէ կ՚անցնի Հայաստանն այսօր, ժողովրդային ազատ քուէներով նոր խորհրդարանի ու անոր նախագահին՝ Լեւոն Տեր-Պետրոսեանի ընտրութիւններէն ետք:

Դէպի ամբողջական ժողովրդավարութիւն տանող մայր հայրենիքի այս յաղթական երթով, ոչ մէկ սփիւռքահայ թէ հայրենի քաղաքական կազմակերպութիւն կրնայ հոգեպէս այնքան բաւարարուած ու երջանիկ զգալ՝ որքան Ռամկավար ազատական կուսակցութիւնը: Մեր ազգային իրականութեան մէջ, քաղաքական մտածողութեան զարթօնքի անցնող մէկ դարու ընթացքին, Ռ.Ա.Կ.-ը եղաւ այն միակ հայկական կուսակցութիւնը, որ որդեգրեց, քարոզեց եւ անշեղօրէն կիրարկեց ռամկավարական գաղափարաբանութիւնը, զայն հակադրելով բիրտ ուժի եւ ամբողջատիրական դրութիւններու յատուկ հակաժողովրդավար քաղաքականութեանց: Ռամկավար շարքայիններու սիրտ ուռեցնող հրճուանքը յատկանշական է մասնաւորաբար անոր համար որ՝ հայրենի ժողովուրդը իր բոլոր խաւերով, համայն սփիւռքահայ զանգուածները, ի տես հայրենիքի մէջ կատարուող պատմական բարեշրջութիւններուն, կ՚ընդունին, կը փառաբանեն ու իրենք իսկ տարածելու կը ձգտին ռամկավար մտածողութիւնը, ջատագովելով քաղաքակիրթ ու մարդկայնական այդ գաղափարաբանութեան քարոզած անքանաբարելի իրաւունքները:

Ռամկավարական սկզբունքներու հիմնաքարը, ի շարս այլոց, խօսքի եւ գաղափարներու արտայայտութեան ազատութիւնն է, հետեւաբար, այդ գծով անժխտելի դեր ունի կատարելիք ռամկավար ազատական մամուլը Հայաստանի մէջ, իր խօսքով դաստիարակելու եւ ժողովրդավար մտածողութեան ճամփէն առաջնորդելու 70 տարի շարունակ իր կարծիքը արտայայտելու հիմնական իրաւասութենէն զրկուած հայրենի ժողովուրդը:

Հայաստանի մէջ Ռամկավար ազատական «Ազգ» եռօրեայի լոյս ընծայումը կը հանդիսանայ շոշափելի փաստը այն իրողութեան, որ Հայաստանի նոր պետական ղեկավարութիւնը իրօք վճռած է դուրս գալ երկար տասնամեակներու գաղափարական լճացումի այլասերիչ քաղաքականութենէն եւ արտօնել որ խօսքի ազատ արտայայտութեան ըմբռնումը տեղ գտնէ ժողովուրդի մտածողութեան մէջ: «Ազգը» անտարակոյս պիտի հանդիսանայ այդ առողջ, վերանորոգիչ քաղաքականութեան շեփորահարը եւ պիտի ձգտի անոր կիրարկումին՝ Ռամկավար ազատական կուսակցութեան եօթ տասնամեակներ ի գործ դրած ժողովրդավար սկզբունքները ունենալով որպէս ուղեցոյց:

Սրտի մեծ բերկրանքով կ՚ողջունեմ «Ազգի» լոյս ընծայումը, որ անկասկած նոր շունչ պիտի բերէ հայրենի մամուլին, աշխուժացնելով ժողովուրդին անկաշկանդ մտածողութիւնը, ձեռներէցութեան ոգին, ստեղծելու, բարգաւաճելու ու բարգաւաճեցնելու բնական ձգտումը՝ ի խնդիր հանրային եւ անհատական բարօրութեան:

Բարի երթ, սիրելի ընկերներ:

ԱՐԱԷՆ-ՆՈՒՊԱՐ ՄԱՄՈՒՐԵԱՆ
Խմբագիր ՌԱԿ-ի Մոնրէալի պաշտօնաթերթ «Ապագայի»

«ԿԱՄՔ»

Հ.Հ.Դ. Ֆրանսիայի պաշտօնաթերթ «Կամքի» 13 փետրվար 1991թ. խմբագրականից քաղում ենք

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ

Կրօնապլի հայութիւնը, փոքրաթիւ գաղութ մը, միշտ ալ ցուցաբերած է կենսունակութիւն, իր զանազան կազմակերպութիւններով:

(...)Բազմիցս արտայայտուած ենք հայ մամուլի անուրանալի նպաստի գծով: Հայ թերթը, հայատառ թէ լատինատառ, ամէն անգամ երբ կը բացուի հայու յարկին տակ, իրեն հետ կը բերէ տեղեկութիւն, հայկական ներկայութիւն եւ շունչ, հայու խօսք: Այս գիտակցութեամբ ալ, Կրօնապլի դաշնակցական խումբը զոհողութեան գընով որոշած է հարիւր ընտանիքի «ԿԱՄՔ» նուիրել, մէկ ամիս շարունակ, որպէսզի հայկական թերթ ստանալու, տեսնելու եւ կարդալու տակաւին վարժութիւն չունեցողներու մօտ յառաջանայ հետաքրքրութիւն:

(...)Կ՚ընդունինք մամուլի այն պարզ օրէնքը, որ կ՚ըսէ թէ թերթը ինքզինքը պիտի արժեցնէ, որպէսզի բաժանորդ ունենայ եւ վաճառուի: Բայց հարկ է վեր առնել նաեւ միւս երեսը, այն որ յաջորդական պատշաճեցումներով եւ հրաժարումներով հայկական թերթի պահանջը գրեթէ կամ ամբողջովին չքացած է, քանի որ ան չի նմանիր եւ երբեք պիտի չնմանի տեղական թերթերուն. երկու հայկական օրաթերթի շաբաթական բոլոր թիւերը գումարած մեծ թերթի մը մէկ օրուան ծաւալը չունին: Բայց ինչ որ հայկական թերթը կը բերէ, բոլոր մեծ թերթերը միասնաբար պիտի չբերեն: Այս հասկացողութեամբ ալ հայկական թերթ պէտք է առաջարկել ամէն անգամ երբ այդ հնարաւոր է:

ՅԱՅՐԵՆԻՔ

Հ. Հ. Դաշնակցության Բոստոնի պաշտօնաթերթ «Հայրենիք» օրաթերթի 12 փետր. 1991-ի թվակիրում «Մեր ընդդիմախոսները եւ մենք» ենթախորագրի տակ լույս տեսած հոդվածից քաղում ենք.

ԵՐԲ ՋՈՒՐԿ ԵՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՋԷՆՔԷՆ

Դաշնակցութեան ճիտին պարտքը դարձած է, կարծէք, հնամաշ թէ նորելուկ իր ընդդիմախօսներուն ատենատեն յուշել ու սորվեցնել գաղափարական պայքարի առողջ սկզբունքները:

(...) Նման ստիպողութեան մը տակ կը գտնուինք ներկայիս, երբ յատկապէս Արցախի ու ընդհանրապէս Հայաստանի մէջ Դաշնակցութեան վերընծիւղման ու յարաճուն ժողովրդականութեան դէմ յանդիման՝ խուճապահար ու ջղագար դարձած, հնամաշ թէ նորելուկ ընդդիմախոսներ դարձեալ անձնատուր եղած են հակադաշնակցական անազնիւ ու ինքնանպատակ արշաւներու փորձութեան:

Այդ փորձութիւնը հաւանաբար հասկնալի կրնայ ըլլալ ոմանց պարագային, որոնք սեփական կուսակցութեան կամ խմբակցութեան հանդէպ հայրենի մեր ժողովուրդին անտարբերութեան կամ անտեսումին հակազդել կը փորձեն այդ ձեւով՝ Դաշնակցութեան դէմ մաղձ թափելով: Բայց նման վարքագիծ մը ո՛չ հասկնալի եւ ո՛չ ալ ներելի կրնայ ըլլալ անոնց պարա-

շարունակությունը՝ էջ 4

digitised by A.R.A.R.@

-ԿԻՐԸ 3-ՐԴ ԷՋԻՑ

գային, որոնք քաղաքական ինչ-ինչ պայմաններու եւ դատաւորումներու բերումով՝ պետական իշխանութեան դռները բաց կը գտնեն իրենց առջեւ հայրենի հողին վրայ:

Անարդարանալի է առանձնապէս այն փորձութիւնը, որուն գերին դարձած կը թուին ըլլալ հայրենի ժողովրդային շարժումներու ճամբով դիրք ու պաշտօն գրաւած որոշ տարրեր, անպատասխանատու «պատասխանատու»ներ՝ որոնք մեծ գիւտ մը կատարողի շուտիկութեամբ սկսած են փարիզ Դաշնակցութենէն հեռացուած, բայց Դաշնակցութեան շնորհիւ հայ իրականութեան մէջ անունի վերածուած «փառքի մուրացկաններու»: Այդ փորձութեան հիւանդագին մէկ արտայայտութիւնը եղաւ ՀՀՇ-ի Նոյեմբեր 1990-ի երկրորդ համագումարին նախկին դաշնակցականի մը հակադաշնակցական մաղձին առջեւ պաշտօնական բեմ բանալու փութկոտութիւնը: Եւ կարծէք աւելիով բորբոքած այդ առթիւ դաշնակցական մամուլի ցուցաբերած անտեսումէն, ՀՀՇ-ի պաշտօնաթերթը՝ «Հայք», ծանուար 1991-ին լոյս ընծայեց այլ նախկին դաշնակցականի մը հակադաշնակցական ցափոտուքը՝ «Ֆրանս-Արմենի»-ի կողմէ անոր հետ կատարուած հարցազրոյց մը լուսարձակի տակ առնելով:

Գաղափարական քննութեան ու տեսական պատասխանի արժանի ոչինչ գոյութիւն ունի հակադաշնակցական կիրքով կուրացած այդ արտայայտութեանց մէջ: Բայց անպայման կ՚արժէ անդրադառնալ ու պատասխանել Դաշնակցութենէն հեռուացուած անուններով հակադաշնակցական արշաւին վառելանիւթ հասցնելու նորեկ մեր ընդդիմախօսներու զուր շուտիկութեան:

Այլեւս չենք զարմանար, որ հակահամայնավար պայքարի երդուեալ դրօշակիրի հանգամանքով ներկայացող այդ տարրերը, յատկանշականօրէն եւ ուղղակիօրէն, հարազատ ժառանգորդը կը դառնան նոյն համայնավարներուն՝ երբ հակադաշնակցական արշաւի զէնքեր կը փնտռեն...

(...) Պատմութեան դառն դասը սորվելու ընդունակ չեն երեւիր նաեւ նորօրեայ մեր ընդդիմախօսները, երբ համայնավարներու ճամբէն իրենք եւս կ՚ուզեն քալել եւ իրենց հերթին մեր ժողովուրդի բարոյական պատին զարնել իրենց գլուխը՝ նախկին դաշնակցականներու միջոցաւ Դաշնակցութիւնը վարկաբեկելու փորձութեան յանձնուելով: Մանաւանդ որ հակադաշնակցական իրենց մոլուցքին զէնք կ՚ուզեն դարձնել նախկին դաշնակցականներ, որոնք Քաջազնունիներու եւ Բեգլարներու կազմակերպական ու բարոյական կշիռն ալ չունին... աւելի ճիշտ՝ նոյնիսկ անարդար է բաղդատութեան որեւէ եզր փնտռել այդ առումով:

(...) Մեր ճիտին պարտքը ահա կատարեցինք: Նախկին դաշնակցականներով հակադաշնակցական արշաւին կեանք տալու նորընծայ մեր ընդդիմախօսներուն մէկանգամընդմիշտ կը զգուշացնենք, որ միայն զոհեր ու խլեակներ կրնան «շահիլ» իրենց այս շուտիկութեամբ: Անցեալ փորձ է՝ գաղափարական իրենց սնանկութիւնը նախկին դաշնակցականներու մաղձով վարագուրելու նման վարքագիծ մը: Անցեալ՝ որովհետեւ հայ ժողովուրդի նորագոյն պատմութիւնը հայ պոլշեւիկներու վախճանին դատապարտած է անուղղաները:

Երբ զուրկ են գաղափարական պայքարի բարոյական ըմբռնումէն եւ անձնատուր եղած են նպատակը կ՚արդարացնէ միջոցը մոլորանքով պատմութեան անցնող պոլշեւիկեան փորձութեան՝ նորօրեայ մեր ընդդիմախօսները չեն կրնար տարբեր ճակատագրի արժանանալ հայ ազգային ազատագրական պայքարի մէջ:

Դաշնակցութեան դեմ ի զուր է պայքարը՝ առանց գաղափարական զէնքի:

ԽՄԺԱԿ
«Հայրենիք»
12 փետրվար 1991

«ՆԱՅԻՐԻՏ»-Ը ՎԵՐԱԲԱՆԱԼ... ԲԱՅՑ ԻՆՉ ԳՆՈՎ

Հայաստանում շատերին է ծանոթ Կարապետ Քացախյանի անունը: 1944 թվին Երուսաղեմում ծնված, միջնակարգ կրթությունը ՀԲԸ Միության Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան վարժարանում ստացած, իսկ այնուհետեւ բարձրագույն մասնագիտական կրթությունն ու գիտական տիտղոսները Երեւանի եւ Հարվարդի համալսարաններում ստացած գիտնականը կենսոլորտի գոյապահպանության մարզում լավագույն գիտնականներից մեկն է Կանադայում եւ Մ. Նահանգներում: 1982-85 թթ.-ին նա ընտանիքով ներգաղթեց Հայաստան եւ փորձեց աշխատել «Նայիրիտ» գիտաարտադրական միավորումում, իր մասնագիտական օգնությունը ցույց տալու համար հարազատ ժողովրդին: Սակայն, պարզապես նրան չթողին այդ մեկը: Ու նա դառնացած հեռացավ Հայաստանից, եւ այժմ Լոս Անջելեսում աշխատում է իբրեւ ԱՄՆ-ի նախկին նախարարներից Լի Թոմասի համապատասխան ընկերության տնօրեն:

Իր արտասահման վերադառնալուց հետո Կ. Քացախյանը միշտ մերժում էր որեւէ հարցազրույց տալ, նույնիսկ այն բանից հետո, երբ «Գարուն» ամսագիրը 1988 թ. 9-րդ համարում ի վերջո հրապարակեց նրա հայտնի նամակը: Սակայն, «Նաիրիտ»-ի հարցի վերարծարծման այս օրերին Լոս Անջելեսում հրատարակվող «Նոր Օր» թերթի խմբագիր Հակոբ Պողոսյանին հաջողվել է նրա հետ ունենալ հետեւյալ հարցազրույցը:

ՀԱՐՑ. - Հայաստանի Հանրապետության վարչապետ Վազգեն Մանուկեանն խորհրդարանի նիստին առաջարկեց վերաբանալ «Նայիրիտ»-ը, պատճառաբանելով երկրին տնտեսական վատթար կացությունը: «Նայիրիտ»-ի վերաբացման մասին երբ սկսան տարածայնություններ շրջել, Հայաստանի պետական շրջանակներ յայտնեցին, թէ պիտի առնեն արտասահմանի գիտական շրջանակներու եւ յատկապէս հայ գիտնականներու կարծիքը արդիւնաբերական այդ հսկան աւելի արդիւնաւէտ եւ առողջական պայմաններու մէջ բանեցնելու համար: Ձեր կարծիքով, արդեօք առնուա՞ծ էին արտասահմանի հայ գիտնականներու առաջարկությունները այս կապակցութեամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ - Ըստ երեւոյթին առնուած է միակողմանի որոշում մը, որովհետեւ, արտասահմանեան հայ գիտնականներու կարծիքներն ու առաջարկությունները նախագահ Լեւոն Տեր Պետրոսեանին եւ վարչապետ Վազգեն Մանուկեանին ուղարկուեցան Ամերիկահայ գիտնականներու եւ ճարտարագէտներու միութեան նախագահին կողմէ ստորագրուած նամակով մը, ծնունուար 3, 1991-ին: Իմ ստացած տեղեկութեանս համաձայն, «Նայիրիտ»-ի վերաբացման հարցը պիտի ենթարկուէր յաւելեալ ուսումնասիրութիւններու: Եւ ահա, շատ մեծ աճապարանքով, հարցը կը դրուի խորհրդարանի առջեւ, «այո» կամ «ոչ» ըսելու:

Հետեւաբար, կատարուած էր հապճեպ եւ առանց խորհուրդ հարցնելու քայլ մը՝ վատ նախապատրաստուած պատճառաբանութիւններով: Կը թուի թէ եղածը Մոսկուայի ճնշումին տակ էր: «Նայիրիտ»-ի արտադրության մէկ մասը, ինչպէս յայտնի է, ունի ռազմագիտական նշանակութիւն:

Հ.- «Նայիրիտ»-ը բանալու մասին վարչապետին տուած պատճառաբանությունները ունէին տնտեսական հիմնաւորում: Ըստ ձեզի, ի՞նչ պէտք էր ըլլար պատճառաբանությունը, տնտեսական՞ թէ գիտական...:

Պ. - Տնտեսական պատճառաբանության նախապատմութիւն կրնանք տալ միայն այն պարագային, եթէ մարդկային կեանքին վրայ կարենանք յատուկ գին մը նշանակել - օրինակ՝ 100.000 ռուբլի, մէկ միլիոն, եւայլն...: Որովհետեւ քիմիական որեւէ արդիւնաբերության եւ յատկապէս «Նայիրիտ»-ի պարագային կարելի է ուղղակի գիծ մը քաշել եւ տեսնել, թէ արտանետումներէն տարին մօտաւորապէս քանի՞ հոգի կը մահանայ տարբեր տեսակի քաղցկեղային հիւանդութիւններէն: Արտադրության բերած շահույթը, բաժնելով մահացածներու թիւով, կարելի է գիտնալ, որ ի՞նչը կարելի է տնտեսապէս ընդունելի համարել, վերաբանալու համար «Նայիրիտ»-ը:

Առողջապահության նախկին նախարար Էմիլ Գաբրիէլեանի եւ Երեւանի գլխաւոր բժիշկ Մայրապետեանի Մոսկուա առաքած բազմաթիւ յուշագիրները կը հաստատեն, թէ ահաւոր վնաս կը պատճառեն «Նայիրիտ»-ի արտանետումները, մանաւանդ՝ օդի մէջ արտանետուող քլորոպրենը եւ քաղցկեղ յառաջացնող օրկանական միւս նիւթերը, յատկապէս մանկահասակ երեխաներու առողջության վրայ: Ինչպէ՞ս կարելի է համեմատել ասիկա տնտեսական օգուտին հետ:

Իմ հոն աշխատած շրջանին (1982-1985) շատ անխոհեմ ձեւի կ՚աշխատցնէին թէ՛ գործարանը եւ թէ գործարանին մէջ քիչ գոյութիւն ունեցող՝ շրջակայ միջավայրի պահպանության թեքնոլոճին: Ոչ մէկ տուեալ հաւաստիքը կուտայ, որ այսուհետեւ պիտի կարենան միջազգային ընդունուած նորմերը պահպանելով աշխատցնել գործարանը: Իմ ստացած տեղեկութիւններով, միայն ջուրի համար 100 միլիոն տոլարէ աւելի պիտի ծախսուի Dupont ընկերության պատենտավորած երկու միջոցները կիրարկելու, աղազրկելու եւ օրկանական նիւթերը վերադարձնելու ետ հոսքային գիծ, եւ ասիկա միայն British Petroleum-ի monomer-ի արտադրության բաժնին համար, որ մէկ փոքր մասը կը կազմէ «Նայիրիտ»-ին: Օդի արտանետումներու նուազեցման մասին ակնարկութիւն անգամ չկայ: Կրնաք երեւակայել, թէ ինչքա՛ն հսկայական գումարներ ալ պիտի ծախսուին օդի զտման համար:

Տնտեսական դրդապատճառներով եթէ բացուի «Նայիրիտ»-ը, եւ մինչ այդ ոչ մէկ միջոցառում կիրարկուի օդի, ջուրի եւ հողի թունաւորումը պակսեցնելու համար, ապա բոլոր վնասները, որոնք մինչեւ հիմա գոյութիւն ունէին, պիտի շարունակուին յետագային ալ:

Մեզի ուղարկուած տուեալները ցոյց կուտան, որ Dupont-ի բաուչուկ-2 սիստեմին բացուլէն ետք, տասնապատկուած է բլորոպրենի արտանետումները օդ: Մինչդեռ, պէտք էր ըլլար ճիշդ հակառակը: Ըստ երեւոյթին, կա՛մ շահագործման մեթոդը սխալ է, կամ ալ հակառակ Dupont-ի եւ Kobe-Steel ճապոնական ընկերության նախագիծերուն, չեն տեղադրուած կամ չեն բանիր օդի եւ ջուրի թունաւորումը պակսեցնող գործիքները: Կը շարունակեն ահաւոր չափով թունաւորել քաղաքին բնակչութիւնը, յատկապէս գործարանի անմիջական շրջակայքը, Երրորդ մասի բնակչութիւնը:

Տնտեսական նկատառումներէն մէկն պէտք էր ըլլար այն, որ ըստ Խ. Միութեան օրէնքին, 1.5 քիլոմեթր շառաւիղով առողջապահական գօտի մը ստեղծուէր գործարանին շուրջ: Քանի որ ատիկա չունին ներկայիս, զայն ստեղծելու համար հաշուարկը ցոյց կուտայ 270 միլիոն ռուբլիի ծախս մը՝ գործարանի շրջակայքի ժողովուրդը տեղափոխելու եւ նոր բնակարաններ յատկացնելու: Այս ալ տնտեսական հարցին մաս կը կազմէ:

Եթէ պէտք է գիտական հիմքերու վրայ աշխատցնել, այդ գիտական հիմքը կ՚ենթադրէ հսկայական գումար՝ 270 միլիոն ռուբլի՝ միմիայն ժողովուրդը տեղափոխելու համար առողջապահական այլ գօտի մը:

Ուրիշ ծախս մը, որ նոյնքան ահաւոր է. 300 հազար հոգի խմելու ջուրը անխնայօրէն կը տրուի «Նայիրիտ»-ին, առանց նախնական մաքրման, որովհետեւ աշխարհի ամենէն մաքուր ջուրն ունի Երեւանը: Փոխանակ ըմպելի ջուրը տալու ժողովուրդին, կը տրուի «Նայիրիտ»-ին: Երեւանի բնակչության որոշ մէկ մասը բաւարար ջուր չունի: Ատիկա եւս տնտեսական եւ առողջապահական հսկայ վնասներէն մէկն է:

Երրորդ. տնտեսական հսկայ վնասը՝ ելեկտրական ուժն է: Երեւանի համար յատկացուած ելեկտրուժի մէկ չորրորդը կը տրուի «Նայիրիտ»-ին. ուրեմն, ելեկտրականութիւն արտադրելը նոյնպէս օդի ապականում կը պատճառէ, մանաւանդ որ փակ է աթոմակայանը, ուրեմն այրուող մազութը կամ բնական կազը օդ կ՚արտանետեն ազոտի օքսիտներ եւ ծծումբի օքսիտներ, որոնք կը բարդացնեն Երեւանի օդային աւազանի ապականումը:

Այս բոլոր ծախսերը քով-քովի դնելէ ետք միայն կարելի է տնտեսական հաշուարկ կատարել, որովհետեւ այս ապականման հետեւանքով մարդիկ կը հիւանդանան, գործէ կը բացակային. աշխատանքային կորուած օրեր են ասոնք: Կրնան չմեռնիլ, բայց հիւանդության բուժման համար կատարուող ծախսեր եւս կան:

Դարձեալ կը վերադառնանք նոյն հարցին: Ի՞նչ գին կը դնէ Հայաստանի կառավարութիւնը հայ մարդու կեանքին վրայ:

Հ. - Հակառակ անոր որ դուք տրամադրութեան տակ չունիք վարչապետ Վազգեն Մանուկեանի տեղեկագիրը «Նայիրիտ»-ի վերաբացման մասին, այսուհանդերձ, որպէսզի կարելի ըլլայ բանեցնել «Նայիրիտ»-ը եւ որոշ սուղ դրամանիշ ապահովել մեր բիւջէին, ձեր կարծիքով ի՞նչ են այն նախապայմանները, որոնք պէտք է կատարուին «Նայիրիտ»-ը բանալէ առաջ: Գիտական ի՞նչ բարեփոխումներ պէտք է կատարուին գործարանը աշխատցնելէ առաջ:

Պ. - «Նայիրիտ»-ի փակման արդիւնքը եղաւ այն, որ Երեւանի օդային աւազանը արտանետուեցաւ քլորոպրենի, օրկանական թթուներու գոլորշիներու, սեւ մուրի եւ նոյնիսկ phosgene-ի (Ա. համաշխարհային պատերազմի մէջ գործածուող թունաւոր մահաբեր կազ) նուազ քանակութիւն: Քաղաքակիրթ բոլոր հասարակութիւններու մէջ արդէն 15 տարիէ աւելի ընդունուած է, որ քիմիական որեւէ նոր ձեռնարկութեան բացումը պէտք է ուղեկցուի ուսումնասիրութեամբ մը որ կը կոչուի environmental assessment: Ասիկա կը չափէ քաղաքի օդային աւազանին ներկայ վիճակը եւ ապա կը կատարէ հաշուարկը, թէ նոր բացուելիք գործարանի արտանետումներն ի՞նչ ազդեցութիւն պիտի ունենան քաղաքի օդային աւազանին վրայ: Տուեալ տեղանքին վրայ, չափելով հովերու 24 ամեայ հոլովոյթը, կը հաշուէ, թէ գործարանի ծխնելոյզներէն կատարուած արտանետումները քաղաքին-ո՞ր մասին վրայ կ՚իյնան: Ստացուած տուեալներով, դժուար չէ իմանալ, որ տուեալ քաղաքի թաղամասերուն մէջ ինչպիսի՞ հիւանդութիւններու աճ կրնայ յառաջանալ: Ասիկա կը կոչուի risk assessment: Այսպիսի ոչ մէկ հաշուարկ կատարուած է Հայաստանի քիմիական գործարաններու պարագային: Բայց հիմա, որ «Նայիրիտ»-ի նման հսկայ ձեռնարկութիւն կը վերաբացուի, անհրաժեշտ է կատարել risk assessment (վտանգի գնահատում), նախքան բացման որոշումը: Եթէ այդ risk assessment-ները արդարացնեն «Նայիրիտ»-ի բացումը, ապա ստիպուած ենք դարձեալ վերադառնալ հայ մարդու կեանքին գին մը նշանակելու հարցին...: Զայն կը ձգենք խիղճին Հայաստանի կառավարութեան եւ հայ ժողովուրդին՝ աղէտները դիմագրաւելու կարողութեան: Նախ պէտք է գիտնանք, թէ ի՞նչ աճ պիտի արձանագրէ մահացութիւնը, ծանր հիւանդութիւնը եւ խեղանդամութիւնը:

Արդեօք բաւարարուա՞ծ էք այս պատասխանով:

Հ. - Ո՛չ բոլորովին: Մեր ժողովուրդին առջեւ վերապրումի հարց մըն ալ կայ, գիտնալով որ «Նայիրիտ»-ը ունի առողջապահական իմաստով շատ մը անպատեհութիւններ...:

Պ. - Թէեւ «Նայիրիտ»-ը ունի շրջակայ միջավայրի պահպանութիւնը ապահովող որոշ գործիքներ, դժբախտաբար մեծ մասը անոնց կա՛մ սխալ նախագծուած են, կա՛մ սխալ կառուցուած են, կա՛մ սխալ կը շահագործուին եւ կամ բնաւ չեն շահագործուիր: Այնպէս որ, հարցը ո՛չ միայն «Նայիրիտ»-ին ապականութիւնը հակակշռող՝ արտասահմանեան կամ միջազգային լաւագոյն որակի սիստեմ մը ապահովել է, այլ փոխել՝ մտածելու եւ աշխատելու ամբողջ մօտեցումը, որպէսզի մեր եղբայրները հասկնան, թէ որքան կարեւոր է արտադրությունը՝ նոյնքան կարեւոր է անոր մաքրությունը:

Երբ կատարուի վտանգի գնահատումը, պարզ կը դառնայ, թէ որքանո՞վ պէտք է պակսեցնել «Նայիրիտ»-ի արտանետումները եւ նուազագոյնի իջեցնել հետեւանքը՝ ժողովուրդին վրայ:

Դժուար է ըսել, օրինակի համար, թե եթէ 100 պայմանական միաւոր արտանետենք՝ կը մահանայ 10 երախայ, արդեո՞ք 60 արտանետումէ պիտի մահանայ միայն 1 երախայ: Վտանգի գնահատումը ցոյց պիտի տայ, թէ ի՞նչն է ընդունելին: Արտանետումները հարիւրէն վաթսունի իջեցնելու գործը կարելի է յաջողցնել՝ ապականութիւնը հակակշռող արտասահմանեան սիստեմներով: Բայց, pollution control system-ները հոն ղրկելը հարցին լուծումին միայն կէսն է: Հարցը զանոնք արդիւնաւէտ աշխատցնելն է, որուն փորձառութիւնը չունին մինչեւ հիմա: Ունէին control system-ներուն մէկ մասը: Օրինակի համար, օրկանական թթուներու արտանետումները ապրելով թունազրկելու գործիքները բերուած էին Արեւմտեան Գերմանիայէն (KAVAK սիստեմը):

Երկու օր աշխատած են այդ գործիքները եւ պայթած՝ որովհետեւ խախտած էին սահմանուած չափանիշները: Մեր «խելօքները» սահմանուած 4 տոկոսը («քանի վառում է, մի քիչ էլ տանք» ըսելով) բարձրացուցած են 12 տոկոսի, եւ ամբողջ սիստեմը պայթած է: Այսօրուան արժէքով մէկ ու կէս միլիոն տոլարի կորուստ:

Հետեւաբար, հարցը չի կայանար միայն դուրսէն տրուած լու-

digitised by A.R.A.R.@

ծումներում վրայ: Ինչպես մարդիկ տան ներսը կարգ ու կանոն կը պահպանեն (անգլերէն կը կոչուի industrial housekeeping), պէտք է ներսը խղճմտօրէն, կարգ ու կանոնով գործածեն իրենց տրամադրութեան տակ գտնուող մաքրման գործիքները: Կարելի է մաքուր շահագործել, եթէ մարդիկ իրենց ամբողջ մօտեցումը փոխեն եւ խիղճով մօտենան աշխատանքին:

Բայց մաքուր շահագործել այնտեղ՝ ուր «Նայիրիտ»-ը կը գտնուի, հաւասար է «փոքր» ցեղասպանութեան. եթէ «Նայիրիտ»-ը հեռացուի քաղաքէն, շուրջը ստեղծուի 1,5 քլմ. առողջապահական գօտի, այն ատեն միայն կարելի է արդարացնել շահագործումը:

Այն վիճակի մէջ, որ կը գտնուի ան, ո՛չ մէկ փաստարկ կը բնայ արդարացնել «Նայիրիտ»-ի վերաբացումը:

Հ. - Ե՞րբ կառուցուած է «Նայիրիտ»-ը:

Պ. - 40-ական թուականներուն:

Հ. - 40-ական թուականներէն ետք որեւէ փոփոխութիւն կատարուա՞ծ է արտադրութեան թեքնոլոճիին մէջ:

Պ. - Այո: Սկիզբը արտադրութիւնը միայն հայկական հումքով էր, կ՚աշխատեր հայկական կրաքարի հիման վրայ: Կրաքարէն կը ստանային կալսիումի կարբիդ: Կալսիումի կարբիդէն՝ ասեթիլէն եւ ասեթիլէնի յաջորդական փոխարկումներով կը ստանային կաուչուկը:

60-ական թուականներուն որոշեցին կարբիդի բաժինը փակել, պատճառաբանելով որ փոշին կը թունաւորէ բնակչութիւնը: 1978 էն ասդին առիթ չփախցուցին կրկնելու, որ կարբիդը փակեցին, ժողովուրդը փրկելու համար թունաւորումէ: Կեղծիքի ստորնագոյն աստիճանը կը հանդիսանայ ասիկա, որովհետեւ ճիշդ նոյնատիպ եւ նոյն հզօրութեամբ կարբիդի արտադրութիւն, նոյնքան վնասակար փոշիով, գոյութիւն ունի Կիրովականի մէջ: Որպէսզի փոշին նուազ թունաւորէ ժողովուրդը, սկիզբը շինեցին 30 մեթրնոց ծխնելոյզ մը, ուրկէ փոշին որոշ շրջանակէ մը վար իյնալով՝ սպաննեց ամ-բողջ բուսականութիւնը եւ թունա-տրեց ժողովուրդը: Ապա ծխնելոյ-զը բարձրացուցին 60 մեթր, բայց այս անգամ փոշին տարածուեցաւ աւելի մեծ շրջագիծի վրայ: Ի վերջոյ, ծխնելոյզը բարձրացուցին 100 մեթր, հսկայական տարածութեամբ կործանելով Գուգարաց աշխարհը:

Կարբիդի փակման իրական պատճառը, ըստ Երեւանի կաուչուկի (այժմեան «Նայիրիտ») նախկին տնօրէն Հայկ Ծաւոյեանի այն էր, որ կարբիդի վառարանները սկսած էին քանդուիլ եւ հնարաւոր չէր անոնց վերակառուցումը: Ես կը հաւատամ իր ըսածին. ո՛չ միայն քանի որ ազնիւ հայ էր ան, այլ նաեւ այն պատճառով՝ որ ճիշդ նոյն սիստեմով Կիրովականի մէջ յարաբերաբար նոր կառուցուածը մինչեւ այսօր կը գործէ: Անցեալները հաղորդում կար, որ վերաբացուած է կարբիդի բաժինը Կիրովականի մէջ՝ երկրաշարժէն ետք:

70-ական թուականներուն որոշեցին թեքնոլոճին փոխել եւ կաուչուկի հիմքը՝ ասեթիլինը ստանալ բնական կազի cracking-ով, այսինքն ճեղքումով: Անոր վնասակար արտանետումը սեւ մուր է, շատ բարակ սեւ մուր, որ կը պատէ թոքերուն ներսիդին, դժուարացնելով արտաշնչումը: Բարեբախտաբար, չկրցան ընդհանրացնել այդ եղանակը, որովհետեւ Իրան որոշեց բնական կազ չծախել Միութեան:

Իրրեւ հետեւանք, ստիպուած եղան զարգացնել երրորդ թեքնոլոճին, butadiene-ի հիմքի վրայ, հումքը ներածելով այս անգամ տխրահռչակ Սումգայիթէն: Բայց երբ սկսան աշխատցնել butadiene-ը, տեսան թէ հայկական կարբիդէն արտադրուող ասեթիլինային կաուչուկին որակը ամենաբարձրն էր: Ստիպուեցան կարբիդ ներածել մինչեւ իսկ Իտալիայէն, որպէսզի կարենան ասեթիլին ստանալ եւ բարձրորակ կաուչուկ:

Զարմանալիօրէն, Կիրովականի Միասնիկեանի անուան գործարանէն կարբիդ չէին կրնար ներածել, որովհետեւ ան կը պատկանէր համամիութենական պարարտանիւթերու նախարարութեան, իսկ «Նայիրիտ»-ը՝ անոր մրցակից նաւթային-քիմիական արդիւնաբերական նախարարութեան: Այսինքն, փոխանակ հումքը հարիւր կիլոմեթր հեռուն ստանալու, կը ներածէին Իտալիայէն:

Երբ տնտեսական հաշուարկներ կ՚ընէ վարչապետ Մանուկեան, պէտք է այս բոլոր հաշիւները, որոնք ծախս կը կոչուին մեր հասարակութեան մէջ, հանէ իր սպասելիք ծախման գիծէն եւ յետոյ որոշէ, որ շահը որքա՞ն է (cost analysis): Այդ 100 միլիոն տոլարի շահին ո՞ր մասը իսկապէս զուտ շահ է եւ ո՞ր մասը ընդհանուր եկամուտ:

Կրնայ զուտ շահոյթը ըլլալ կէս միլիոն, կրնայ նոյնիսկ կորուստ ունենալ, որովհետեւ ստիպուած է ծախս ընելու ջուրի, ելեկտրականութեան, արտասահմանեան հումի նիւթի, կամ նոյն իսկ butadiene-ի վրայ, որ կը գնուի Ատրպէյճանէն, արտադրելու համար տարեկան 50.000 թոն կաուչուկ:

Հ. - Իմ նարցումիս նպատակը հետեւեալն էր. միջազգային թեքնոլոճին արագընթաց փոփոխի մէջ է: «Նայիրիտ»-ի արդադրութիւնը իր այս թեքնոլոճիով ետ չէ՞ միջազգային որակէն եւ եղանակէն, եւ քանի մը տարի ետք արդեօք ժամանակավրէպ պիտի չդառնա՞յ:

Պ. - Ձեր ըսածը հասնելու վրայ է: Իսկապէս ժամանակավրէպ արտադրութիւն է: Ժամանակավրէպ ապրանք կ՚արտադրէ՝ իր դիմացկունութեամբ, ինքնարժէքով իր տեղը փոխարինող 7-8 տեսակի կաուչուկներու հետ բաղդատած: Արդէն 1980-ական թուականներու սկիզբը, երբ Խ. Միութիւնը որոշեց British Petroleum-ի նոր արտադրութիւնը, որ butadiene-ը կը վերածէ բլորոպրէնի, 60-ական թուականներու սիստեմ գնեց, որովհետեւ աւելի աժան էր: Կար 80-ական թուականներու շատ աւելի կատարելագործուածը, բայց շատ սուղ էր: Հայաստանին չակերտեալ «նուիրեցին» հին, մաշած արտադրութիւն մը, որ աշխարհի վրայ ուրիշ ոչ մէկ երկիր կը գործածէր: Այսօր 100 միլիոնոց ծրագիրը, որ պէտք է կարկտէ մաշած տաբատը, իրականութեան մէջ կարկտելու համար է այդ 1960-ական թուականի սիստեմով British Petroleum-ի արտադրութիւնը, որուն վրայ գոյութիւն չունի բնապահպանութեան որեւէ սիստեմ՝ ո՛չ օդի, ո՛չ ջուրի, ո՛չ հողի:

Հ. - Վերջին հաշուով մեր ժողովուրդը պիտի ապրի: Հնարաւոր տարբերակ մը չէ՞ աշխատցնել «Նայիրիտ»-ը իր այս վիճակով, տակալ, յուսալ որ վերապրումի ուրիշ աղբիւրները կը գտնէ հայրենի պետութիւնը:

Պ. - Այնքանով հնարաւոր է, որքանով որ մարդ փակ սենեակին մէջ փայտածուխի վառարանը կը վարէ. քիչ մը կը տաքնայ եւ յետոյ ածխածինի մոնօքսիթէն կը խեղդուի եւ կը մահանայ: Այդ նմանողութեամբ հնարաւոր է, որովհետեւ կրնայ եւ երկրաշարժ պատահիլ եւ «Նայիրիտ»-ի ո՛չ մէկ կառոյց երկրաշարժակայուն է: Կրնան ներքին պայթումներ պատահիլ: Ժամանակին կ՚ըսէին, թէ տարին մօտ 5-7 մահ «ընդունելի է», չակերտներու մէջ: Գաղափարը այդ ընդունելիութեան ինքնին ահաւոր է գործարան մը աշխատցնելու համար, որովհետեւ դարձեալ մարդկային կեանքին վրայ գին դրուած է:

Ապա, գոյութիւն ունեցող քլորի, քլորոպրենի, պիթատիենի պահեստները պայթումավտանգ են, հրկիզուող եւ թունաւոր:

Թրքական սահմանէն ընդամէնը 12 քլմ. հեռու, Ադրբեջանի հետ լարուած քաղաքական պայմաններու տակ, այսպիսի գործարանի մը գոյութիւնը նոյնքան ահաւոր վտանգ է, որքան աթոմակայանինը: Գործարանը իր առկայութեամբ մահ է, նոյնիսկ երբ լաւ աշխատի եւ պահպանուին շրջակայ միջավայրի մաքրման նախադրեալները:

Իմ կարծիքով, այս բոլորը միասին կարենալ երաշխաւորելը,- խափանարարութիւն պիտի չըլլայ գործարանէն ներս, դուրսէն մէկը օդանաւով պիտի չռմբակոծէ,- ոչ մէկ գործիք սխալ պիտի չաշխատի, կարելի պիտի ըլլայ արտասահման արտածել արտադրութիւնը, եւ այլն,- անհնարին է: Կարելի է մէկը ապահովել՝ ի գին միասին, բայց բոլորը միասին անկարելի է: Մանաւանդ երբ մարդ կը գիտակցի, թէ 3-4 տարի ետք միջազգային շուկայի վրայ կրնան յայտնուիլ այնպիսի կաուչուկներ, որ այլեւս անկարելի դառնայ քառորդ արժէքով վաճառել «Նայիրիտ»-ին քլորոպրենային կաուչուկները:

Հ. - Ձեր կարծիքով, Ադրբեջանի կողմէ կատարուած Հայաստանի շրջափակումը, որ ըստ երեւոյթին կ՚արժանանայ Մոսկուայի լուռ համաձայնութեան, կապ ունի՞ «Նայիրիտ»-ի փակման հետ:

Պ. - Ո՛չ: Իմ կարծիքով, ժողովուրդը վերջ ի վերջո անդրադարձաւ, որ իր առողջական վատթար վիճակին պատճառը «Նայիրիտ»-ի արտանետումներն էին: Ասկէ առաջ ալ Ադրբեջան «մանր» շրջափակումներու ենթարկած է Հայաստանը: 1984-1985-ին տեղի ունեցաւ թթխմորի շրջափակում:

Անդրկովկասի թթխմորի միակ գործարանը կը գտնուէր Բաքու: Որոշ ժամանակ Հայաստանի մէջ ցեխի որակի հաց կ՚արտադրուէր, որովհետեւ Ադրբեջան որոշած էր Հայաստան թթխմոր չարտածել: Շրջափակումներ եղած են աւելի փոքր չափի, բայց արտասահմանեան թերթերում չէ հասած լուրը:

Հազիւ թէ Մոսկուայի դրդումով կատարուած ըլլայ շրջափակումը: Երբ մարդոց երկրին մէկ մասը, ըստ ադրբեջանցիներուն, կը փորձեն բաժնել, անոնք ալ, իրենց ձեռքի զէնքը պիտի գործածեն: Այդ զէնքը միշտ ալ եղած է երկաթուղային երթեւեկութիւնը ուշացնելը, դադրեցնելը, ոլոկուած ապրանքները Ադրբեջանի սահմաններուն մէջ քանդելը, կարեւոր մասերը գողնալը եւ այլն: Այսինքն, ընդհանրապէս Հայաստանը նեղ կացութեան մատնելը: Անօթութեան չի հասնիր հարցը, բայց ասեղնոտելով կը քայքայէ ամբողջ ազգի մը ջղային դրութիւնը:

Հ. - Քիչ առաջ ըսիք, թէ չունիք վարչապետ Վազգէն Մանուկեանի տեղեկագիրը: Ինձի այնպէս կը թուի, որ եթէ նոյնիսկ ունցած ըլլայիք, դուք դարձեալ դէմ պիտի արտայայտուէիք «Նայիրիտ»-ի վերաբացման...:

Պ. - Դժուար է ըսել, թէ տեղեկագիրին մէջ ի՞նչ կէտեր նկատի առնուած են, որպէսզի այս խոսքերը կանխակալ չդրակուին: Բայց նկատի ունենալով որ միայն Սումգայիթէն կարելի է բերել «Նայիրիտ»-ի հումքը, արտադրութիւնը ցամաքային ճանապարհով դուրս պիտի արտահանուի Բաքուի վրայով:

Հ. - Ինչու՞ ոչ Վրաստանի երկաթուղագիծով:

Պ. - Վրացական երկաթուղագիծը մարդատար է եւ ոչ ապրանքատար: Խոշոր վագոններ չեն կրնար անցնիլ թունելներէն: Արդիւնաբերական հիմնական երկաթուղին Նախիջեւանի վրայով կ՚անցնի Ադրբեջան: Ուրեմն, այս պայմաններու տակ, թէ հումքը, թէ փոխադրութիւնը կախուած է հակառակորդի խիղճէն եւ բարի կամեցողութենէն: Արտադրութիւնդ յաճախորդներուդ ժամանակին եւ որակով հասցնելը անգամ կախեալ է հակառակորդի տրամադրութենէն, ինչ որ կը նշանակէ, թէ Հայաստանի կառավարութիւնը դրուած է անել կացութեան մէջ:

Աշխատցնելով «Նայիրիտ»ը, պիտի փորձեն ծախել արտադրութիւնը: Արտադրութիւնը ծախելու համար պէտք է զիջումներ կատարուին Ադրբեջանին, որ թոյլ տայ իր սահմաններէն այդ արտադրութեան արտահանումը:

Հարցը դիտելով բոլոր կողմերէն, անկարելի կացութեան մը առջեւ դրուած է Հայաստանի կառավարութիւնը: Աւելի խելամիտ կ՚ըլլար ընդհանրապէս փակել «Նայիրիտ»-ի այժմեան արտադրութիւնները, քիմիական եղած գործիքներով ուրիշ բաներ արտադրել, որոնք նուազ ապականեն ջուրը, օդը եւ հողը եւ ելեկտրականութեան եւ ըմպելի ջուրի նուազ կարիք ունենան: Ամենէն կարեւորը, որ պէտք չըլլայ հումքը գնելու հակառակորդէն եւ հակառակորդին ճանապարհով արտածելու: Micro chips, օրինակի համար, որեւէ բան, բացի կաուչուկէն: Իրականութեան մէջ, կաուչուկը ստալինեան օրերէն ժառանգ մնացած արտադրութիւն է, աւելի ճիշտ պարտադրուած մեզի...:

Հարցազրոյցը վարեց՝
ՃԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆ

լուսանկարը՝ Միքայել Ալվազեանի

գործ՝ Մարկոս Թիրոյանի

digitised by A.R.A.R.@

The New York Times

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՆ ՎԱԽԵՑԱԾ Է

Խիստ միջոցների մոսկովյան կողմնակիցները ձգտում են քաոսի:

Չնայած Միխայիլ Գորբաչովի հավաստիացումներին, թե Մոսկվան չի մերժի Վարշավայի Ուխտի փլուզումը, Կենտրոնական Եւրոպայում խորհրդային ծրագրերի կապակցությամբ անհանգստությունն աճում է: Վերջերս Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Անդրեյ Կոզիրեւը հայտարարեց. «Եթե Խորհրդային Միությունում մութ ուժերը հաղթանակեն, ապա Կենտրոնական Եւրոպան կը-դառնա նրանց հաջորդ զոհը»: Լեհաստանի պրեզիդենտ Լեխ Վալենսան կանխազգում է սոսկալի վտանգ: Չեխո-Սլովակիայի ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ցան Ռումլը զգուշացնում է «խորհրդային զինված ուժերի պետական ահաբեկչությունից, որոնք որոշ հանգամանքների դեպքում, նախկին կոմունիստական երկրներում կարող են ապակայունացնել դրությունը»: Հունգարիայի վարչապետ Ժոզեֆ Անթալը հետաձգել է Խորհրդային Միություն կատարելիք իր առաջին պաշտոնական այցը:

Թեւ Մոսկվան տնտեսապես եւ քաղաքականապես շատ թույլ է ոչնչացնելու համար այդ նոր ժողովրդավարությունը, սակայն ապակայունացնելու նրա հնարավորությունը դեռեւս նշանակալի է:

Կան անհանգստացնող նախանշաններ, որ Խորհրդային Միությունը խստացնում է իր հարաբերությունները նախկին դաշնակիցների հետ, մասնավորապես Լեհաստանի: Վերջինս հատկապես մտահոգված է խորհրդային զորքերի այնտեղ գտնվելով եւ դրանց դուրս գալու անորոշ ժամկետով: Անցյալ տարի համաձայնվելով դուրս բերել զորքերը Հունգարիայից եւ Չեխո-Սլովակիայից մինչեւ 1991 թվականի, իսկ Արեւելյան Գերմանիայից՝ մինչեւ 1994 թվականի կեսերը, Խորհրդային Միությունը այժմ հայտարարում է, թե Լեհաստանից խորհրդային զորքերը դուրս չեն բերվի այնքան ժամանակ, մինչեւ Արեւելյան Գերմանիայում գտնվող խորհրդային բանակի մեծ քանակազմը դուրս չգա այնտեղից:

Մյուս վատ նախանշանը Մերձբալթյան իրադարձությունների եւ Հունգարիայում, Չեխո-Սլովակիայում, Աֆղանստանում նախկինում խորհրդային զինված միջամտությունների միջեւ նմանությունն է, որոնք կատարվել են այն ժամանակ, երբ Արեւմուտքի ուշադրությունը շեղված էր:

Խորհրդային Միությունում տեղի ունեցող բանավեճը՝ թե ով է «կորցրել» Արեւելյան Գերմանիան եւ սոցիալիստական ճամբարի մյուս մասը, հավատ է ներշնչում կենտրոնական Եւրոպայի ժողովուրդներին: Ժողովրդավարները պնդում են, որ Խորհրդային Միությանը ավելի ձեռնտու է կայուն բարիդրացիական հարաբերությունները (ինչպես Ֆինլանդիայի նետ), քան բռնակալությունը:

Կենտրոնականները համոզված են, որ Մոսկվան իր նահանջի փոխարեն պետք է ավելի շահավետ պահանջներ ներկայացներ:

«Եթե Չիմ Բեյքերը սակարկեր Գերմանիան, Լեհաստանը եւ այլ երկրներ Արեւմուտքին հանձնելու համար, ձեզանից ավելի շատ օգուտ կունենայինք», - ասաց ինձ մի ամերիկագետ:

Սակայն սկզբունքային հարցն այն է, թե ինչ են ուզում կուսակցությունում, բանակում եւ ՊԱԿ-ում գտնվող պահպանողականները, որոնց իշխանությունն օրեցօր աճում է: Դրանից զատ, նրանք հուսով են, թե բազմակարծության եւ ազատ շուկայական հարաբերությունների փորձը կըտապալվի Կենտրոնական Եւրոպայում: Այդ են վերակառուցման դեմ նրանց փաստարկումները: Այն ժամանակ, երբ Լեհաստանը խորվում է գործադուլների մեջ, Հունգարիան՝ մաշվում ազգայնամոլական բռնկումներից, Չեխիայում եւ Սլովակիայում աճում թշնամանքը երկու ազգերի միջեւ, պահպանողականները խորհրդային քաղաքացիներին կարող են հարցնել. «Սա՞ էր ձեր ուզածը»: 97-ամյա Լազար Կագանովիչը՝ քաղբյուրոյի 1930-1957 թվականների անդամը, նախազգուշացնում էր. «Այն, ինչը կատարվում է Հունգարիայում եւ Լեհաստանում, դեռ նախերգանքն է հետագայում կատարվելիքի»: Խիստ միջոցների կողմնակիցներն ուզում են, որ Խորհրդային Միությունը, որը տանը հեղաշրջվել է, իսկ դրսում՝ նահանջել, այնուամենայնիվ հարգվի: Ավելին, նրանք չեն ընդունում իրենց նախկին դաշնակիցների հակակոմունիստական դիրքորոշումը, Լիտվային աջակցելու հայտարարությունները, ՆԱՏՕ-ին միանալու խոսակցությունները: Խորհրդային Միության վիրավորված արժանապատվությունը վերականգնելու համար նրանք ձգտում են արտասահմանում նրա հեղինակությունը բարձրացնել:

Եթե պահպանողականները գընային այդ ճանապարհով, Մոսկվան կկարողանար ճնշում գործադրել եւ վախեցնել Կենտրոնական Եւրոպայի երկրներին՝ տպառնալով Արեւելյան Գերմանիայում զինավարժությունները շարունակել, սահմանափակ ժամկետում Հունգարիայից եւ Չեխո-Սլովակիայից զորքերը դուրս չհանել եւ գազի ու նավթի հետագա մատակարարումները կրճատել:

Սակայն պարտվողական քաղաքականությամբ, Խորհրդային Միությանը, Միացյալ Նահանգներին, Գերմանիային եւ Արեւմտյան Եւրոպայի մյուս երկրներին անհաշիվ վնասներ հասցնող գործողություններով ինչի՞ կարելի է հասնել:

Վերջապես, եթե նույնիսկ արեւելաեւրոպական փխրուն ժողովրդավարական պետություններում տեղի ունենային հեղաշրջումներ, անգամ քաղաքացիական պատերազմներ՝ ներքին ճգնաժամերի հետեւանքով, կոմունիստները դժվար թե գային իշխանության գլուխ:

Այդ ամենի մտահոգող պատասխանն այն է, որ Խորհրդային պահպանողականները ձգտում են առավել լարվածության եւ անկարգությունների: Նրանց ճանապարհը դեպի իշխանություն կախված է Կենտրոնական Եւրոպայի անկայուն իրավիճակից: Այդպիսով, ռեգիոնի ապագան դեռեւս կախված է Խորհրդային Միության ներքին փոփոխություններից:

Վաշինգտոնն այդ ամենը պետք է նկատի ունենա: Կենտրոնական Եւրոպային ցույց տրվող ԱՄՆ-ի օգնության դադարեցումը մինչ Պարսից ծոցի պատերազմի ավարտը, հնարավորության թերագնահատում է:

Գորբաչովին աջակցել այն դեպքում, երբ շարունակվում է Կենտրոնական Եւրոպայում ահաբեկման քաղաքականությունը, կընշանակի կառչել հին հույսերին եւ չընդունել նոր իրավիճակը: Միայն այն ժամանակ, երբ ռուսները լքեն Կենտրոնական Եւրոպան, վերջ կտրվի սառը պատերազմին: Եթե ոչ, ապա վերադառնալու ենք «հին տաշտակին»:

ՋԱՐԼԶ ԳԱԹԻ

«Նյու Յորք Թայմզ»

THE CHRISTIAN SCIENCE MONITOR

ԴՈԼԼԱՐԸ ՆԱՀԱՆՋՈՒՄ Է ՀԱՆԴԱՐՏ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ

Ամերիկյան դոլլարը նահանջում է, իսկ Վաշինգտոնը՝ հորանջում:

Արդյունաբերական բազմաթիվ երկրների կենտրոնական դրամատները անցյալ եւ այս շաբաթ դրամափոխանակության օտար շուկաների վրա օգնում էին դոլլարին: Սակայն այս անգամ չէր ըզգացվում հնաոճ «դոլլարի ճգնաժամը», եւ ոչ էլ որեւէ ահազանգ: Հակառակ Ծոցի պատերազմին, Խ. Միությունում քաղաքական խառնաշփոթությանը եւ Արեւելյան Եւրոպայում դրամատիկ փոփոխություններին, արտաքին դրամափոխության շուկաները համեմատաբար հանդարտ էին, բաղդատած 1970-ական եւ 1980-ական թվականների:

«Դոլլարը ճիշտ է վարվում, ասում է Հարվարդի համալսարանի տնտեսագետներից Մարտին Ֆելշտեյնը:- Այդպես է պատահում, երբ վարում են դրամական ավելի հանգիստ քաղաքականություն»:

Քանի, որ ամերիկյան ֆեդերալ պահեստային համակարգը վերջին շաբաթներին շարունակ փող էր ներարկում դրամատներ, շահույթի տոկոսները ընկել են ԱՄՆ-ում: Ֆեդերալ համակարգը իջեցրել է նաեւ զեղչի սակերը, այսինքն այն տոկոսները, որ նա գանձում էր առեւտրական դրամատներից, փետրվարի 1-ի դրությամբ:

Դրան հակառակ, մեկ օր առաջ Բունդեսբանկը վեր մղեց գերմանական շահատոկոսների սակը, դանդաղեցնելու համար դեպի բում գնացող իր տնտեսությունը: Հետեւաբար, ներդնողներն ու լումայափոխները, մտածելով որ կարող են ավելի մեծ շահույթ ապահովել Գերմանիայում քան ԱՄՆ-ում, դոլլարով էին գնում եւ դոլլարները վաճառում:

«Կառավարություններն իրենց ներքին խնդիրներին էին նախընտրություն տալիս», բացատրում է մասնագետներից մեկը:

Ֆեդերալ համակարգը մտադրվել է լարվածության առաջն առնել, մինչդեռ Բունդեսբանկի նպատակն է արգելել ինֆլյացիայի աճը եւ բավարար դրամագլուխ հայթայթել նախկին Արեւելյան Գերմանիայում տնտեսությունն արդիականացնելու համար: Գերմանիաների միացումը բյուջետային դեֆիցիտի պատճառ է դարձել, այն պետք է կարգավորել:

Մասնագետներից ոմանք Գերմանիայի ներկա տնտեսական վիճակը նմանեցնում են (բյուջետային թույլ եւ դրամական՝ խիստ քաղաքականություն) 1980-ականների սկզբի ամերիկյան կացությանը: Այն ժամանակ Ռեյգանի վարչությունը կըտրուկ կտրել էր տուրքերը, մինչ ֆեդերալ համակարգը վարում էր դրամական խիստ քաղաքականություն՝ զըսպելու համար ինֆլյացիան: Դրա արդյունքներից մեկն էր դոլլարի արժեքի բարձրացումը 1980-85 թթ.-ի միջեւ: Այժմ գեր-մանական մարկն է բարձրացնում իր արժեքը:

Մասնագետներից Ռոբերտ Սոլոմոնն ասում է, որ այդ միջամտության պատճառներից մեկն էլ Եւրոպական դրամական համակարգի (ԵԴՀ) ներսում ստրեսային վիճակի բուժումն է: Ֆրանսիան եւ Իտալիան, որոնք դանդաղող տընտեսություն ունեն այժմ, ակնհայտորեն ուրախ չէին շահատոկոսները բարձրացնելու գերմանական որոշումից: Դա նշանակում էր, որ իրենք էլ պետք է բարձրացնեին իրենց տոկոսները՝ ավելի եւս տկարացնելով իրենց տնտեսությունները, կամ էլ դիսկ անեին ԵԴՀ-ի ներսում իրենց դրամանիշների անկման:

Անցյալ շաբաթ ԱՄՆ-ը, Կանադան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Ֆրանսիան եւ Եւրոպական մյուս ինը երկրները մոտավորապես 1.5 միլիարդ դոլլար գնեցին՝ նրա գինը բարձր պահելու համար: Ճապոնիան չըմասնակցեց այդ գործարքին: Եւ այս շաբաթ՝ չորեքշաբթի օրը, այդ միջամտությունը կարողացավ մի քիչ ուժեղացնել դոլլարը: Այսուհանդերձ այս տարի դոլլարը մարկի դիմաց նահանջել է շուրջ 3.5 տոկոս, ճապոնական յենի դիմաց՝ 5 տոկոս:

Տնտեսագետ Քեւին Լոգանն ասում է, որ դոլլարը պիտի մնա ճնշման տակ այնքան ժամանակ, քանի ֆեդերալ համակարգը շարունակի շահատոկոսները ցածր պահելու իր քաղաքականությունը: Տկար դոլլարի, որի պատճառով արտածումներն ավելի էժան, ներածումները ավելի թանկ են դառնում, օգուտներից մեկն այն է, որ այդպիսով նվազում է ԱՄՆ-ի առեւտրի բացը: Նա ասում է, որ առեւտրական փոխանակությունների բացը այս տարի կկազմի 85-90 միլիարդ դոլլար, 1990 թ. 103 միլիարդի եւ 1989 թ. 109.4 միլիարդի դիմաց:

Ըստ դոկտոր Ֆելշտեյնի, դոլլարը պետք է ավելի եւս ընկնի՝ հավասարակշռելու համար ԱՄՆ-ի միջազգային վճարումները:

ԴԵՎԻԴ ՖՐԱՆՍՈՒԱ

«Քրիսչըն սայընս մոնիտոր», 14 փետրվար 1991.

ԴԵՄՔԵՐ

ՊԵՏՐՈՍ ԹԵՐԶՅԱՆ. ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՇԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Նավթարդյունաբերության աշխարհում լավագույն մասնագետներից է համարվում այժմ փարիզաբնակ Պետրոս Թերզյանը: Նա հիմնադիր խմբագիրներից է այդ ասպարեզում ամենակարեւոր թերթերից մեկի՝ Petrostrategy շաբաթաթերթի, որ լույս է տեսնում ֆրանսերեն, անգլերեն եւ արաբերեն լեզուներով: Իբրեւ հեղինակավոր մասնագետ Պ. Թերզյանը հրավիրվում է նավթարդյունաբերությանը նվիրված բոլոր կարեւոր գիտաժողովներին եւ հանդիպումներին, որտեղ հանդես է գալիս գիտական զեկուցումներով: Նրա խմբագրած շաբաթաթերթը կատարյալ ուղեցույց է համարվում բոլոր այն մասնագետների եւ նույնիսկ պետությունների համար, որոնք զբաղվում են նավթարդյունաբերությամբ:

Ծագումով լիբանանահայ այս մասնագետը մոտիկից հետաքրքրվում է նաեւ հայ ազգային կյանքով: Նախքան իր մասնագիտությանը նվիրվելը, դեռ ուսանող տարիներին, նա հիմնադիր խմբագիրներից մեկն է եղել 1969-75 թվականներին Բեյրութում լույս տեսնող «Երիտասարդ հայ» թերթի, որտեղ հոդվածներ էր ստորագրում միջազգային տնտեսությանը եւ ազգային հարցերին նվիրված:



ԱՆՄՇԱԿ ՆԱՎԹԻ ԳՆԵՐՆ ԸՆԿՆՈՒՄ ԵՆ

Վերջին շաբաթվա ընթացքում Պարսից ծոցի ճգնաժամի լուծման գծով խորհրդային խաղաղարար ճիգերի հետեւանքով անմշակ նավթի գները սկսեցին ընկնել միջազգային շուկաներում:

Անմշակ նավթի 1 տակառի արժեքը դոլլարով

Աղբյուրը՝ «Նյու Յորք Մերջանթայլ Էքսչենջ»

ՍԱԿԱՐԱՆ

Ուրբաթ, 15 փետրվարի 1991թ. տվյալներով, տարբեր երկրների դրամանիշների փոխհարաբերությունը ամերիկյան դոլլարի հետ՝ Նյու Յորքի սակարանում պարզել է հետեւյալ պատկերը, ըստ "Wall Street Journal" թերթի 19 փետրվար 1991թ. համարի:

Առաջին սյունակում տրվում է տվյալ երկրի դրամային միավորի փոխարժեքը՝ ամերիկյան դոլլարով, իսկ երկրորդ սյունակում՝ ամերիկյան դոլլարի արժեքը տրվյալ դրամանիշի հետ համեմատած: Բոլոր տվյալները ներկայացվում են միջին հաշվով:

	ամերիկ. դոլլար *	տվյալ երկրի դրամանիշ **
Ավստրիալական դոլլար	0.7879	1.2692
Անգլիական փաունդ (Ֆունտ)	1.973	0.50685
Կանադական դոլլար	0.8676	1.1526
Ֆրանսիական ֆրանկ	0.199415	5.01475
Գերմանական մարկ	0.679	1.47275
Իտալական լիրա	0.00090325	1107.125
Ճապոնական յեն	0.0076875	130.085
Քուվեյթյան դինար	չի նշվում	չի նշվում
Լիբանանյան լիրա	0.000913	1095
Սաուդական ռիյալ	0.26667	3.75
Շվեյցարական ֆրանկ	0.7913	1.26375
Թուրքական լիրա	0.00032525	3074.5

** տվյալ երկրի դրամանիշի արժեքը ամերիկյան դոլլարներով*
*** ամերիկյան դոլլարի արժեքը, արտահայտված տվյալ արկրի դրամանիշներով*

digitised by A.R.A.R.@

ՆՈՐԱ ԱՐՄԱՆԻՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Արա Երեշակյանի «Ժամկետը չոր օր» ֆիլմում նկարահանվելու հրավերով վերջերս Երեւանում էր գտնվում ամերիկահայ հանրածանոթ դերասանուհի Նորա Արմանին: Նրա հեռուստատեսային, կինո եւ թատերական բազմաթիվ դերակատարումներից առանձնապես արժանահիշատակ է «Արարատի կայքը» ("Sojourn at Ararat") ներկայացումը՝ յուրահատուկ մի ստեղծագործություն, որ Նորա Արմանին ու Ժիրայր Փափազյանը բեմադրել են աշխարհի զանազան երկրներում: Այն մի բանաստեղծական ճամփորդություն է նախաքրիստոնեական շրջանից մինչեւ ներկա օրերը, որ իրականացվում է Նարեկացու ու Ռուբակի, Սայաթ Նովայի ու Մեծարենցի, Վարուժանի ու Սիամանթոյի, Թեքեյանի ու Զահրատի, Թումանյանի ու Իսահակյանի, Չարենցի ու Սեւակի, Սարոյանի ու Էմինի միջոցով:

Առաջին անգամ բեմադրվել եւ մրցանակի է արժանացել 1986-ի օգոստոսին Էդինբուրգի միջազգային փառատոնում:

«Ոչ ոք առանց ցնցումի չի դուրս գալիս "Sojourn at Ararat"-ից:

Նրանք, որոնք հայկական ծագում չունեն, պետք է ժամանակ գտնեն տեսնելու այս գործը: Նրանք, որ դիտել են... դրա մեջ պիտի տեսնեն մի նվեր՝ իրենց իսկ մշակույթին»:

Ֆրանսիս Բաում Նիքոլսոն
("Star news today")

«Ազգ»-ի առաջիկա համարներից մեկում կարդացեք հարցազրույց ՆՈՐԱ ԱՐՄԱՆԻԻ հետ:

Le Monde ՍՄԲՈՂՋ ԷՋԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ֆրանսիական հանրահայտ «Մոնդ» թերթը իր 9 փետրվար 1991 համարի մի ամբողջ էջ նվիրել է հայկական թեմային: Տպագրված են Արմինե Հովհաննեսի 1990թ. Հայաստանում արած լուսանկարները, կենսագրական տեղեկություններ նրա մասին եւ հարցազրույց: Ներկայացված են հայերին վերաբերող նոր գրքեր:

Arménie 1990

Ծնվել է Թեհրանում, 17-րդ դարասկզբում Շահ Աբասի կողմից Սպահան գաղթեցրած հայերի շառավիղներից է: Անգլերեն ուսումնասիրել է Ուայթ կղզում, ձեռնարկությունների կառավարումը՝ Քեմբրիջում, ֆրանսերենը՝ Վիշիում, Էքս-ան-Պրովանսում ստացել պատմաբանի վկայական... 1990 թվականին Ֆրանսիայում էր, երբ պայթեց Իրան-Իրաք պատերազմը, եւ Արմինեն որոշեց մնալ: Ընդամենը երեք տարի է, ինչ արտաքինից փխրուն եւ ամոթխած, սակայն կամային այդ կինը, որին առավել մարդիկ, քան տեսարաններ են հետաքրքրում, վճռեց դառնալ պրոֆեսիոնալ լուսանկարիչ:

Անցյալ տարի նա գնաց Հայաստան, որտեղից հարյուրավոր լուսանկարներ բերեց: Չնայած աներեւակայելի դժվարություններին, Արմինեին հաջողվեց հասնել հեռավոր, վտանգավոր շրջաններ, ուր զբոսաշրջիկներ չեն լինում ընդհանրապես, եւ բերել հափշտակող պատկերներ: Բիբլիական դեմքեր, որոնք, ասես, ելել են հազարամյակների փոշուց, երկիր, որ ինքնուրույնության առաջին իսկ քայլերից դեմ առավ երկրաշարժին (50 հազար զոհ, 500 հազար անօթեւան), մուսուլման հարեւանի թշնամանքին (300 հազար փախստականներ), ջարդերի, բռնությունների, շրջափակման:

«Առաջին անգամ Հայաստան գնացի 1989-ի դեկտեմբերին, երկրաշարժից մի տարի անց: Հասա Սպիտակ՝ երկրաշարժի էպիկենտրոն, դեկտեմբերի 7-ին եւ գնացի գերեզմանատուն: Երբեք չեմ մոռանա: Ծնցող էին գերեզմանաքարերը, ասեղով արած մահապատկերները... Կարծես կենդանի լինեին: Կանայք, երեխաներ՝ խրված արտասվում էին, ճչում: Ես էլ սկսեցի արտասվել: Հարցրին՝ թե ո՞վ եմ: Երբ ասացի անունս, երեք աղջիկ կորցրած մի կին ըսկսեց աղեկտուր կանչել. «Արմինե, Արմինե: Ես գտա Արմինեիս»:

«Ես գնացել էի երկրաշարժից մեկ տարի հետո ռեպորտաժ անելու: Քանի որ առաջին անգամն էի Հայաստանում, սկսեցի չափչփել երկիրը՝ Լենինական, Երեւան, Կիրովական...

Այնտեղ էի, երբ սկսվեցին հունվարյան դեպքերը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ:

Գաղտնի, խորհրդային անձնագրով, ինքնաթիռով թռա Լեռնային Ղարաբաղ, Ստեփանակերտ: Կյանքումս այդպիսի մաքուր օդ չէի շնչել: Խաղաղ, կանաչին տրվող սարեր: Սակայն, երեկոյան ամեն կողմից կրակոցներ էին հնչում: Գիշերը չէինք քնում: Ես մարտիկների հետ էի: Նրանք զինված էին նատուկենտ կալաշնիկովներով ու որտրդական հրացաններով»:

Պաշարված Ղարաբաղ, ուր սակայն կյանքը շարունակվում էր...

- Դուք երկրորդ անգամ վերադարձաք Երեւան շարունակելու ձեր ռեպորտաժը...

- Այո, անցյալ օգոստոսին: Այն շատ էր տարբերվում առաջինից: Ինձ համար շատ դժվար էր. բենզին չկար, հնարավոր չէր շարժվել: Որոշել էի շրջել ողջ Հայաստանը, սակայն իզուր:

Զկարողացա հեռավոր շրջաններ գնալ, ոչ ոք այնքան բենզին չուներ, որ ինձ հասցներ Վրաստանի սահմանը: Հետո զինված խմբերը շատ էին, հաճախ իրար հակառակ, դրանք խուճապ էին առաջացնում:

Հիշարժան էր այցս Գետաշեն՝ Ադրբեջանում գտնվող հայկական այդ գյուղը, ուր չորս հազար մարդ լրիվ պաշարված, սպառնալիքի տակ էին: Ամենուրեք խորհրդային զինվորներ էին, արգելում էին լուսանկարել: Շուրջը՝ Ադրբեջանն էր...

Ուղղաթիռը միակ կապն էր գյուղի եւ Հայաստանի միջեւ:

- Դուք ձեր մանկությունն անցկացրել եք Թեհրանում: Հայկական ավանդներո՞վ եք դաստիարակվել:

- Այո: Իրանում մոտ 300 հազար հայ կար, շատերը հեղափոխությունից հետո մեկնեցին Միացյալ Նահանգներ, Կանադա, Ֆրանսիա... Մենք ապրում էինք հայկական թաղամասում, մի տարի հայկական դպրոց եմ հաճախել: Կարողալ տվորել եմ ավելի ուշ, Ֆրանսիայում:

- Ֆրանսիայում հայկական միջավայր գտա՞ք:

- Բավականին դժվար: Փարիզի հայկական միջավայրը բոլորովին նման չէ պարսկականին: Այստեղի հայերը շատ են տարբերվում: Ես նրանց հայ չեմ համարում. անունները հայկական են, մասնակցում են հայկական ծեսերին, սակայն մեծ մասամբ ձուլվում են, ոգին այն չէ: Այստեղ ծնվածներն այլեւս հայերեն չեն խոսում, բացի ծերերից, կանոնավորապես եկեղեցի չեն հաճախում: Մարսելում քիչ ավելի բարվոք է... մի բուռ մարդիկ պահպանել են լեզուն, ավանդույթները: Սակայն ընդհանրապես, ամեն ինչ կորած է: Հետո, սրանք Միջին Արեւելքի հայերի պես սրտաբաց չեն: Հյուրասիրությունն է պակասում այստեղ:

Հարցազրույցը վարեց
ՆԻԿՈԼ ԶԱՆԴԸ

լուսանկարը՝ «ՄՈՆԴ»-ի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրակը սառույցի տակ (Le Feu sous la glace). Հայաստանը 1989-1990-ին: Անտուան Ագուջյանի լուսանկարները՝ Երեւանի մասին Ալբերտո Մորավիայի նախաբանով (1959): Parentheses հրատարակչություն, Մարսել: 24x27 չափսի ալբոմ, 128 էջ, գինը 240 ֆր:

Լուսանկարչի վկայությունն է, որը մասնակցել է հումանիտար օգնությանը, մասնավորապես զբաղվել է որբերի ճակատագրով եւ Լեռնային Ղարաբաղում կենտրոնական դեղատուն կառուցելու հարցով:

Հայաստանյան թղթերս (Mes papiers d'Armenie), Ժան Ռեհեյան, Aube հրատարակչություն, 118 էջ, գինը 69 ֆր.:

ԽՍՀՄ-ին խորագիտակ, դաստիարակված 1915-ի ցեղասպանության հուշերով, մարսելաբնակ Ռեհեյանը պատմում է նախնիների կորուստյալ հայրենիք կատարած իր ճամփորդության մասին, մեզ հայտնում իր խոհերն ու տառապանքները:

Հայաստա՞ն: Գրում եմ քո անունը (Armenie. J'ecris ton nom). Ֆրանսիայի եւ Հայաստանի պատմությունները, հեղինակ Ժերար Բեդրոսյան եւ Նիկոլ Պրիոլ: Liana Levi coll. «Ecrivains reporters», 188 էջ, 160 ֆր.:

Դերասանների, հանդիսականների, գրողների, քաղաքական գործիչների եւ ճանապարհորդների կլանող պատմություններ այն յուրահատուկ կապի մասին, ինչը միացնում է Ֆրանսիան Հայաստանին:

Հայկական պոեզիան V դարից մինչեւ մեր օրերը (La poesie armenienne du V siecle a nos jours). Հատընտիր, թարգմանեց եւ կազմեց Վահե Գոդելը: La difference, 232 էջ, 120 ֆր.:

Ներկայացնում է 45 հայ բանաստեղծների:

«Մոնդ», 9 փետրվար 1991

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Գաղտնիք չէ, որ Բաքվի հայության շրջանում 64 վանդականոց շաշկին մեծ մասսայականություն էր վայելում եւ ճանաչված շատ վարպետներ կային: Սակայն հարկադրական արտագաղթի ալիքը նրանց այլ ափեր նետեց: Խորհրդային Միության նախկին չեմպիոն, ռուսական շաշկու խոշոր տեսաբան, գրոսմայստեր Ցուրի Առուստամովը, հազիվ մազապուրծ լինելով՝ փախավ Մոսկվա, իսկ այնտեղից մշտական բնակության մեկնեց Իսրայել, փորձառու վարպետ, ԽՍՀՄ առաջնությունների բազմակի մասնակից Բորիս Սիմոնյանը որոշեց հանգրվանել Սամարղանդում: Ուրախալի է, որ շատերը նախընտրեցին մայր հայրենիքը, նրանց թվում՝ ԽՍՀՄ բազմակի չեմպիոն, գրոսմայստեր Վիտալի Գաբրիելյանը, վերջինիս սաներ հեռակա խաղի ԽՍՀՄ նախկին չեմպիոն Վ. Հայրապետյանը, ԽՍՀՄ զինված ուժերի բազմակի չեմպիոնուհի Նաթելա Արզումանյանը, որը հիմա ուսանում է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Երասխավանում արդեն շաշկու պրոպագանդման մեծ աշխատանք է ծավալել եւ դպրոց հիմնադրել անխոնջ մարզիչ, սպորտի վարպետ Սլավա Մայիլյանը, որի սաներից Արսեն Ասրիթաբյանը օրերս Երեւանում ավարտված հանրապետության պատանեկան առաջնությունում լրացրել է վարպետության թեկնածուի նորմա:

Հատկապես Վիտալի Գաբրիելյանի Երեւան տեղափոխվելուց հետո մեզ մոտ գրեթե մոռացության տրված այդ մարզաձեւը սկսել է բուռն վերելք ապրել: Գրոսմայստերը ոչ միայն իր նվիրված աշխատանքով, մարզչական հմտությամբ, այլեւ մարզական իր ընտանիքով իսկական օրինակ է ծառայում: Վիտալի Գաբրիելյանի կինը եւ ավագ որդին՝ Վլադիսլավը, ռուսական շաշկու սպորտի վարպետներ են, իսկ կրտսեր որդին՝ Վյաչեսլավը, օրերս նվաճեց մեր հանրապետության պատանիների չեմպիոնի կոչումը եւ մարտին հանդես է գալու ԽՍՀՄ պատանեկան առաջնության եզրափակիչում:

Վլադիսլավը ԽՍՀՄ պատանիների նախկին չեմպիոն է, հիմա սովորում է Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի երկրորդ կուրսում: Նա սկսել է հրապուրվել նաեւ ամերիկյան «չեկկերս» անունը կրող խաղով, որը 64 վանդականոց շաշկու տարատեսակներից է: Մոսկվայում տեղի ունեցած այդ մարզաձեւի առաջին խմբի մրցաշարում Վլադիսլավ Գաբրիելյանը գրավեց երկրորդ տեղը եւ իրավունք ստացավ մասնակցելու բարձրագույն խմբի առաջնությանը:

Բարեկամներ, հաշվի առնելով հետաքրքրությունը մարզաձեւի նկատմամբ, մենք կձգտենք աչքաթող չանել այն: Իսկ հիմա ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հետեւյալ խնդիրը.



Սպիտակները հաղթում են

ՄՐՑԱՎԱՐՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Արդեն զգացվում է ֆուտբոլային շնչառությունը: Ընդամենը 8 օր հետո Խորհրդային Միության գավաթի 1990-91 թթ. խաղարկության մեկ քառորդ եզրափակիչ հանդիպումներով կսկսվի ֆուտբոլային նոր մրցաշրջանը: Հիշեցնենք, որ «Արարատը» մարտի 3-ին կհյուրընկալի Օդեսայի «Զերնոմորեցին»: Հայտնի դարձավ, որ խաղը կայանալու է Արտաշատի քաղաքային մարզադաշտում եւ սկսվելու է ժամը 15-ին:

Ֆուտբոլային մրցավարների համամիութենական ատոցիացիան արդեն հաստատել է այն 21 մրցավարների ցուցակը, որոնք վարելու են բարձրագույն խմբի առաջնության խաղերը: Նախորդ մրցաշրջանում բարձրագույն խմբի խաղերը մեր հանրապետությունից սպասարկում էին համամիութենական կարգի մրցավարներ հոկտեմբերյանցի Վլադիմիր Շարոյանը եւ երեւանցի Պողոս Բալիյանը, իսկ առաջին խմբում՝ երեւանցի համամիութենական կարգի մրցավար Ստեփան Գեւորգյանը: 21 ընտրյալների թվում առայժմ միայն Վլադիմիր Շարոյանն է, սակայն մեր մյուս երկու մրցավարները մեկնեցին ծովափ մասնակցելու մրցավարների հավաքին, որտեղ կընտրվեն եւս 3-4 մրցավար, որոնք նույնպես իրավունք կստանան որպես գլխավոր մրցավարներ վարելու բարձրագույն խմբի խաղերը: Ահա թե Վլադիմիր Շարոյանից բացի ովքեր են մյուս մրցավարները. Ա. Բուտենկո, Վ. Բուտենկո, Ա. Կիրիլով, Ա. Մալարով, Վ. Օվչինինիկով, Ցու. Սավչենկո, Ա. Սպիրին, Վ. Ֆիլիպով, Ս. Խուսաինով՝ բոլորն էլ Մոսկվայից, Ա. Գորին (Քիշինեւ), Ի. Գուրման (Դուշանբե), Ցա. Գրիստ (Լվով), Վ. Ժուկ (Մինսկ), Պ. Կոբիչիկ (Զերնովցի), Ն. Լեւնիկով (Լենինգրադ), Վ. Մեդվեդցկի (Վոլժսկի), Վ. Պյանիխ (Դոնեցկ), Ռ. Ռահիմով (Բաքու), Ի. Տիմոշենկո (Դոնի Ռոստով), Վ. Զեխոով (Վլադիկավկազ):

Բացառված չէ, որ մեր մրցավարական շքախումբը համալրվի: Համենայն դեպս ծովափում կազմակերպված ուսումնամարզական հավաքներին տարբեր ժամկետներում մասնակցելու են նաեւ հանրապետական կարգի մրցավարներ, երեւանցիներ Գեւորգ Հովհաննիսյանը, Կարեն Նալբանդյանը, Հենրիկ Իգիթյանը, Ավիկ Հովսեփյանը եւ Սլավա Ղազարյանը:

Ինչ վերաբերում է արարատցիներին, ապա նրանք ավարտում են իրենց ուսումնամարզական հավաքը Գագրայում, այսօր խաղը կազմերով վերջին ստուգողական խաղերում մրցելու են Վոլգոգրադի «Ռոտորի» ու Դուշանբեի «Պամիրի» հետ եւ հենց այսօր էլ վերադառնալու են Երեւան:

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ
(ընտրական մրցաշարեր)

1-ին խումբ
Ֆրանսիա - Իսպանիա 3:1

		Խ	Մ
1	Ֆրանսիա	4	8
2	ԶՍՖՀ	3	4
3	Իսպանիա	4	4
4	Իսլանդիա	4	2
5	Ալբանիա	4	0

6-րդ խումբ
Պորտուգալիա - Մալթա 5:0

1	Պորտուգալիա	5	7
2	Հոլանդիա	3	4
3	Հունաստան	3	4
4	Ֆինլանդիա	2	2
5	Մալթա	5	1

digitised by A.R.A.R.@

Հրաչիկ Սիմոնյանը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ

ԵՐԵՒԱՆ, *21 փետրվար (Սեփ. թղթ.)* Այսօր հետմիջօրեին ըսփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի դահլիճում տեղի ունեցավ վաղուց ակնկալվող լիագումար նիստ, օրակարգի վրա ունենալով, փաստորեն մի հարց՝ նոր նախագահի ընտրություն:

Հայաստանի հանրապետության վարչապետի տեղակալ Կտրիճ Սարդարյանի, կոմիտեի վարչության, աշխատակիցների, հյուրերի եւ մամուլի ներկայացուցիչների առաջ հաշվետու զեկուցումով հանդես եկավ 1985 թվականից ի վեր կոմիտեի նախագահ Կառլեն Դալլաքյանը, որն իր զեկուցման ավարտին ներկայացրեց հրաժարական զբաղեցրած պաշտոնից: Ձայների մեծամասնությամբ այն ընդունվեց:

Այնուհետեւ ծավալվեց կարծիքների փոխանակություն, որի ընթացքում ոմանք հարցումներ ուղղեցին մեկնող նախագահին, մինչ ուրիշները սուր քննադատության ենթարկեցին նրա գործունեությունը, թե որպես կոմիտեի նախագահի եւ թե, դրանից առաջ, կենտկոմի քարտուղարի: Դժբախտաբար, հարցադրումներից շատերն ունեին նեղ անձնական ենթատեքստ: Ըստ էության խոսելու եւ կոմիտեի գործունեությունը համապարփակ վերլուծման ենթարկելու փոխարեն, ոմանց առավելաբար մտահոգում էր դեպի արտասահման գործուղման գնալ-չգնալու հարցը:

Հաջորդաբար առանձին խոսքով հանդես եկան Լ. Սամվելյանը, Գ. Էմինը, Ալ. Հարությունյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Աբաջյանը եւ ուրիշներ:

Այնուհետեւ Կ. Դալլաքյանը առաջարկեց պատմական գիտությունների դոկտոր, Ակադեմիայի թղթակից անդամ եւ գիտնական քարտուղար Հրաչիկ Սիմոնյանի թեկնածությունը որպես նոր նախագահ:

Թեկնածուն կարճ խոսքով ներկայացրեց իր պատկերացումները կոմիտեի հետագա գործունեության շուրջ: Նշելով, որ կոմիտեում աշխատանքի է անցնում Հայաստանի համար ծանր եւ դժվարին պայմաններում, նա այդ հիմնարկի կարեւորագույն առաքելությունը համարեց հայոց խորհրդարանի կողմից ընդունված Հռչակագիրը, ավելացնելով, որ կոմիտեն մի անգամ ընդմիշտ մերժելու է խորհրդայնությունը ըսփյուռքյան տարբեր հատվածների ու հարանվանությունների նկատմամբ ու պիտի գործի միասնական ազգ եւ մեկ հայրենիք ըսկզբունքով:

Ապա, բաց քվեարկությամբ եւ միաձայնությամբ Հ. Սիմոնյանը ընտրվեց կոմիտեի նախագահ:

Վերջում եզրափակիչ խոսքով հանդես եկավ վարչապետի տեղակալ Կ. Սարդարյանը, որ մասնավորապես նշեց, թե հետագա կոմիտեի ուսերին է ծանրանալու նաեւ ներքին սփյուռքի մշակութային կարիքներով զբաղվելու պարտականությունը: Նա նոր նախագահին հանձնարարեց ամենակարճ ժամկետում վերատեսության ենթարկել կոմիտեի կադրերի վիճակը, մշակել հետագա աշխատանքների ծրագիր: Նա կարեւորությամբ շեշտեց, որ հետ այսու չի թույլատրվելու Հայաստանից արտասահման մեկնող ստեղծագործական խմբերի հարցում ներկայումս տիրող անիշխանական վիճակը, օրինակ բերելով վերջերս պարի պետական համույթի խայտառակությունը Մեքսիկայում:

... ՍՐԴՅՈՔ ՈՎՔԵՐ ԵՆ



գծանկար՝ ՄԻՀՐԱՍ ԹՈՐՈՍՅԱՆԻ

ՊԻՑՑԱՆ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՆՐԱՀԱՇՎ

Վաշինգտոնում պիցցա իտալական կերակրատեսակի գլխավոր մատակարար Ֆրենկս Միքսը, որ ճաշարանների մի ամբողջ ցանց ունի ամերիկյան մայրաքաղաքում եւ հայտնի է նաեւ տներին ու հիմնարկներին սպասարկելու իր հմտությամբ, վերջերս ամերիկյան մամուլին հայտարարել է, թե միջազգային այն բոլոր ճգնաժամերի ընթացքում, որոնց մասնակցություն ունի իր երկրի կառավարությունը, պիցցայի պատվերները բազմապատկվում են, Սպիտակ տնից, Պենտագոնից եւ Սի. Այ. Էյ.-ի կենտրոնից, մանավանդ գիշերները:

Օրինակ, հայտնել է նա, հունվարի 7-ի գիշերը Սպիտակ տնից պատվիրել էին ընդամենը 3 պիցցա, մինչդեռ հաջորդ օրերին, երբ բռնկվեց Պարսից ծոցի պատերազմը, պատվերների թիվը անցել է 110-ից, ճիշտ այնպես՝ ինչպես Պանամայում, Գրենադայում եւ Ֆիլիպինյան կղզիներում ամերիկյան միջամտությունից հետո:

Հետեւաբար, Ֆրենկս Միքսի բիզնեսը լավագույն ծանրաչափն է միջազգային քաղաքական կացության:

ՄԱՐՇԵԼԼՈ ՄԱՍՏՐՈՅԱՆԻՆ ԵՒ ԺԱՆՆ ՄՈՐՈՆ՝ ԲԱՆԱԴՐՎԱԾ

Հունաստանի հյուսիս-արեւմուտքում գտնվող Ֆլորինա քաղաքի հոգեւոր առաջնորդ Ավգուստին Գանդիոտիս եպիսկոպոսը բանադրել է հունական ֆիլմարվեստի առաջին աստղերից Թեո Անֆելոպուլոսին ու բոլոր այն դերասաններին, որոնք ներգրավվել էին «Կարապի առկախ քայլը» ժապավենում: Բանադրվածների մեջ են նաեւ իտալացի ճանաչված դերասան Մարչելլո Մաստրոյանին եւ ֆրանսիացի դերասանուհի Ժաննն Մորոն:

Պատարագի ընթացքում սրբազանն արձակել է բանադրանքի հետեւյալ բանաձեւը. «Նրանց հոգիները թող չարժանանան դրախտի եւ թող թափառեն տիեզերքում»: Պատճա՞ռը: Նկարահանվող ֆիլմում կային «բաց» տեսարաններ եւ դեմ էին Աստվածաշնչի պատվիրաններին: Պատարագից հետո շուրջ երկու հազար հավատացյալներ ցույց են կատարել եւ պատառոտել ֆիլմի համար պատրաստված դեկորացիաները:

Հուսահատված՝ «Կարապի առկախ քայլի» նկարահանողները առկախել են իրենց քայլը եւ տեղափոխվել Ֆլորինայից 40 կմ հեռու գտնվող Ամինատիտ քաղաքը:

ԱՇԽԱՐՀՈՒՄ

▬ Մոնղոլիայի ֆինանսների նախարար Այուրզան Բազարխը Վաշինգտոնում ստորագրել է նոր պայմանագիր ըստ որի Մոնղոլիան դարձել է Միջազգային վալյուտային հիմնադրամի 155-րդ անդամը, ունենալով ընդամենը 36 միլիոն դոլլար:

▬ Թեհրանը հայտարարել է եւ բոլոր արաբական երկրներին կոչ է արել չմասնակցել մուսուլմանների այս տարի դեպի Մեքքա կատարվելիք ուխտագնացությանը՝ Սաուդյան Արաբիայի տարածքում «անհավատների» ներկայության պատճառով: Եթե Իրանի կոչը աջակցություն ստանա, ապա XIV դարից հետո առաջին անգամ մուսուլմանների զանգվածային ուխտագնացությունը կարող է չիրականանա:

▬ ԳՖՀ-ում (Գերմանիայում) տեղակայված Արեւմտյան խմբի զորքերից 550 խորհրդային զինծառայողներ դիմել են տեղական իշխանություններին՝ քաղաքական ապաստարան ստանալու պահանջով: Այս մասին հայտարարել է «Բիլդ ամ զոնտագ» թերթի թղթակցին տված հարցազրույցում գեներալ-մայոր Ալեքսեյ Կոզլովը: Նա նշել է, որ դասալիքների թվում կան նաեւ օրինազանցներ: Չնայած խորհրդային կողմի պահանջներին, գերմանացիները առայժմ չեն շտապում խորհրդային զինվորներին հանձնել կարմիր բանակի ղեկավարությանը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

▬ ՌԻՖՍՀ Գերագույն Խորհուրդը հաստատել է հանրապետական հանրաքվեի հետեւյալ հարցերը.

-Ձեր վերաբերմունքը ՌԻՖՍՀ-ի, որպես միացյալ ֆեդերատիվ բազմազգ պետության՝ փոփոխված Միության կազմում պահպանմանը:

-Արդյոք անհրաժեշտ ե՞ք համարում համաժողովրդական քվեարկությամբ պրեզիդենտի պոստի ընդունումը:

Ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներից մեկը հայտարարել է, որ երկրի որոշ ռեգիոններում թղթի պակասի պատճառով չեն տպագրվել հանրաքվեի թերթիկները: Այդ հարցը դրվել է մարզային հանձնաժողովների ուշադրության կենտրոնում:

ՄՈՍԿՎԱ

▬ ՃԱԶՈՎԻ «ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ»

«Նեզավիսիմայա Գազետա» թերթը փետրվարի 21-ի համարում տեղեկացնում է, որ փետրվարի 24-ին խորհրդային բանակի եւ ռազմածովային նավատորմի օրը նշելուց հետո, ԽՍՀՄ պաշտպանության նախարար մարշալ Դ. Ճազովը կմեկնի Արեւելյան Եւրոպա՝ մասնակցելու Վարշավայի պայմանագրի մասնակից երկրների հրաժեշտի վերջին հանդիպմանը: Ըստ հավաստի աղբյուրների, Վարշավայի պայմանագիրը լուծարքի կենթարկվի:

▬ ԱՌԱՆՑ ՊԱԿ-Ի

Մոսկովյան XVII կինոփառատոնը, որը տեղի կունենա 1991 թ. հուլիսի 8-19-ին, այս անգամ ըստ Սերգեյ Սալովյովի, կունենա ընդգծված հեղինակային կողմնորոշում: Կինոփառատոնի կազմակերպիչներն են «Ինտերֆաքս» գործակալությունը եւ Մոսկվայի կինոգործիչների միությունը: Կազմկոմիտեն, որի նախագահը Սերգեյ Ստանկեւիչն է, որոշել է այս տարի ժյուրիի կազմում ՊԱԿ-ի ներկայացուցիչ չընդգրկել: Նման որոշումը բացասաբար է ընդունվել «Լյուբյանկայի» կողմից:

Է. ՍԱՎԻՍԱԱՐԸ ՅԱՆԴԻՊԵՑ ԻՍԼԱՆԴԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Տալլինն, 22 փետրվար 1991 թ.

Մեր սեփ. թղթակից ԳԱՃԱՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

Փետրվարի 21-ին Էստոնիայի վարչապետ Էդգար Սավիսաարը Իսլանդիայում բանակցությունների սեղանի շուրջը նստեց Իսլանդիայի պրեմիեր մինիստր Ս. Հերմանսոնի եւ արտաքին հարաբերությունների նախարար Հաննիբալսոնի հետ:

Էստոնական պատվիրակությանը ընդունեց նաեւ Իսլանդիայի պրեզիդենտ Վ. Ֆինբոգադոտտիրը, որը պաշտպանեց Էստոնական հանրապետության անկախությունը եւ խոստացավ միջնորդ դառնալ Էստոնիայի եւ Խորհրդային Միության միջեւ բանակցություններում:

«ՀԱՅ ԼՐԱԲԵՐԸ» 75 ՏԱՐԵԿԱՆ Է

«Արմյանսկի Վեստնիկ» («Հայ լրաբեր») մոսկովյան լրագրի այս տարվա երկրորդ համարը ազդարարում մինչ այդ նույնանուն վերտառությամբ լույս տեսնող երկու թերթերի միացման եւ հոբելյանական 75-րդ տարեդարձի մասին:

1988 թվականի փետրվարից անկանոն հաճախականությամբ լույս տեսնող պարբերաթերթն արդեն ունի իր կայուն հրատարակիչներին՝ «Ֆենիկս» հրատարակչությունը եւ «Տրանսէկպո» միությունը: Օրաթերթը լույս է տեսնում միայն ռուսերեն:

▬ Մոսկվայի «Հայ մշակույթի» կենտրոնի հյուրն էր Եւգենի Պետրոսյանը: Երեկոյի ընթացքում հնչեցին արտիստի հին եւ նոր ստեղծագործությունները:

▬ Շատրակի աշխարհի տիրակալ Գարի Գասպարովը, Բաքու քաղաքի նախկին բնակիչը, 1990 թ. հունվարին մահացածների ընտանիքներին է նվիրել 5.000 դոլլար: Այս մասին տեղեկացնում է «Մոսկովսկիյե նովոստի»-ի վերջին՝ 8-րդ համարը:

«ՆԵՇԸՆԼԼ ՋԵՈԳՐԱՖԻԿԻ» ՇԱՀՈՒԹԱԲԵՐ ՀԱՄԱՐԸ

Ամերիկյան հանրահայտ աշխարհագրական հանդեսի՝ «Նեշընալ ջեոգրաֆիկի» համար Պարսից ծոցի պատերազմը շահութաբեր է: Գունավոր քարտեզների հրատարակության ասպարեզում մասնագիտացած հանդեսն իր վերջին՝ փետրվարի համարում լույս ընծայեց Միջին Արեւելքի եւ հատկապես Պարսից ծոցի շրջանի երկրների մանրամասն քարտեզները, այն հրատարակելով 10 միլիոն օրինակով, նկատի ունենալով աշխարհի տարբեր կողմերից եւ հատկապես ԱՄՆ-ից եղած պահանջարկը:

Մյուս կողմից, անհրաժեշտ է հիշատակել, որ սոցիոլոգիական հարցումների գործում մասնագիտացած «Գելլապ» հիմնարկը 1988թ. հայտարարում էր, թե ամերիկյան չափահաս երիտասարդների 75 տոկոսը չգիտեր, թե որտե՞ղ է գտնվում Պարսից ծոցը: Եւ սա՝ այն օրերին, երբ այդ շրջանում դեռեւս մոլեգնում էր Իրան-Իրաք պատերազմը:

ԱԶԳ եւ օրյա թերթ. հասցեն՝ Երեւան 375010, Ալավերդյան 47
հեռ. 58-18-41, ֆաքս (8852)562941
AZG semi-weekly, 47 Alaverdian St., Yerevan, Armenia, USSR 375010
phone: 58-18-41, fax: (8852)562941

Խմբագիր՝ Հակոբ ԱՎԵՏԻՔՅԱՆ
Editor Hagop AVEDIKIAN

Կոմպյուտերային շարվածք
Լույս է տեսնում շաբաթը երեք անգամ, շաբաթ
Գինը՝ 30 կոպ.

Տպագրված է ՀԿԿ Կենտրոնական տպարանում, պատվեր՝ 2-16

digitised by A.R.A.R.@